ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

(2014-2015)

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվել է և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2014 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 12-Ա հրամանով:

Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանով և այլ իրավական ակտերով:

Հանձնաժողովի խնդիրներն են՝ նպաստել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողին ներկայացվող բարոյական բարձր չափանիշների ձևավորմանը, նպաստել ծառայողական կարգապահության ամրապնդմանը, նպաստել կարգապահական խախտումների կանխարգելմանը և այդպիսիք ծնող պատճառների վերացմանը, ապահովել Կոմիտեի ծառայողի անկախությունը և իրավունքների պաշտպանությունը, կանխել Կոմիտեի ծառայողին անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը:

Հանձնաժողովը քննարկում է կարգապահական վարույթ հարուցելու մասին միջնորդությունները, տալիս է եզրակացություններ, ընդունում է ընթացակարգային և ըստ էության որոշումներ:

Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումներ.....00
2. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքից քաղվածք 00

3. «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրաման.....00
4. ««Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով «օրենքի կոպիտ խախտում» հասկացության գնահատման ուղենիշների վերաբերյալ» ՀՀ ՔԿ կարգապահական հանձնաժողովի արձանագրային որոշում....00

1. **Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի որոշումներ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

12 դեկտեմբերի 2014 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Վարդան Բալդրյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2014թ. նոյեմբերի 28-ին ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Ա.Ղամբարյանը զեկուցագրի առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի (ծեծ) հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Վարդան Բալդրյանն իր լիազորություններն իրականացնելիս բազմիցս կոպիտ կերպով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, մասնավորապես.

- բռնության հետքերով դիակի առկայության պայմաններում 10 օր նախապատրաստել է նյութեր, վերցրել բացատրություններ, որից հետո քրեական գործ է հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով՝ որոշման մեջ որևէ նշում չկատարելով տուժող Ժորա Ավետիսյանի մահվան վերաբերյալ,
- Ժորա Ավետիսյանի դիակի դատաբժշկական փորձաքննության կատարման ընթացքում փորձագետներին չի տեղեկացրել և ելակետային տվյալներ չի տրամադրել մի խումբ անձանց կողմից տուժողին ծեծի ենթարկելու մասին, միջոցներ չի ձեռնարկել պարզելու տուժողին հասցրած վնասվածքների և վրա հասած հետևանքի՝ մահվան միջև պատճառա-հետևանքային կապը,

- Ժ.Ավետիսյանի դիակը չի զննել, վերջինիս մարմնական վնասվածքները չի արձանագրել,
- հետամուտ չի եղել դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը ժամանակին ստանալու և դրա շուրջ քննություն կատարելու ուղղությամբ,
- միջադեպի՝ մի շարք կարևոր հանգամանքների վերաբերյալ խիստ հակասական և իրարամերժ տեղեկություններ ունենալու պայմաններում որևէ միջոց չի ձեռնարկել էական հակասությունները պարզելու և դրանք վերացնելու ուղղությամբ,
- անտեսել և որևէ քննություն չի կատարել նախաքննության ընթացքում Ժորա Ավետիսյանին հինգ անձանց կողմից ծեծի ենթարկելու վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների շուրջ,
- հետաքննության և նախաքննության ընթացքում որևէ հանձնարարություն չի տվել իրավապահ մարմիններին՝ վիճաբանության առիթը, դեպքի իրական հանգամանքները, դրան մասնակցած անձանց ինքնությունը, յուրաքանչյուրի դերակատարումը պարզելու, միջադեպին ականատես գտնված, դրա մասին տեղեկություններ ունեցող անձանց հայտնաբերելու վերաբերյալ,
- Ժորա Ավետիսյանին տուժող, իսկ նրա հարազատներին՝ տուժողի իրավահաջորդ չի ճանաչել, վերջիններիս չի հարցաքննել,
- չի ստացել և չի ուսումնասիրել Ժորա Ավետիսյանի և վիճաբանության մյուս մասնակիցների բջջային հեռախոսահամարներից կատարված զանգերի վերծանումները,
- չի պարզել, թե Ժորա Ավետիսյանն ու Հովհաննես Թադևոսյանը նախկինում միմյանց ճանաչել են, թե ոչ, ինչ փոխհարաբերությունների մեջ են գտնվել, որն է եղել վիճաբանության իրական առիթն ու պատճառը,
- դատաբժշկական փորձաքննություն չի նշանակել և չի պարզել վիճաբանության մյուս մասնակիցների կողմից հնարավոր մարմնական վնասվածքներ ստացած լինելու հանգամանքը,
- չի զննել Ժորա Ավետիսյանի դիակի հայտնաբերման վայրն ու ավտոմեքենան, որով վերջինիս տեղափոխել են հիվանդանոցի բակ,
- դեպքի վայրի զննությունը կատարել է խիստ թերի և մակերեսորեն,
- նախաքննության շուրջ 40 օրվա ընթացքում հարցաքննել է ընդամենը մեկ վկա:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ ավագ քննիչ Վարդան Բալդրյանը, հանդիսանալով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար ինքնուրույն ուղղություն տալու, անհրաժեշտ որոշումներ կայացնելու, քրեադատավարական օրենքի դրույթներին համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ իրականացնող, ինչպես նաև դրանք օրինական ու ժամանակին կատարելու համար պատասխանատվություն կրող պաշտոնատար անձ, իր վարույթում քննվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով 13.10.2014թ. հարուցված թիվ 11828814 քրեական գործի նախաքննության ընթացքում խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, պահանջները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Վարդան Բալդրյանը թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում, չի կատարել իր պարտականությունները և դրանցում առկա է նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

12 դեկտեմբերի 2014թ. քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հայրապետ Հայրապետյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական

կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Մանվել Ալեքսանյանի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի միջնորդության առթիվ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հայրապետ Հայրապետյանը N 16132314 քրեական գործի քննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, այն է՝ շուրջ 40 օր քրեական գործով որևէ դատավարական գործողություն չի կատարել, ժամանակին չի զննել ստացված վերծանումները, քննությանը հետաքրքրող հեռախոսահամարների սեփականատերերին հարցաքննության հրավիրելու ծանուցագրեր ուղարկել է տևական ժամանակ անց և քրեական գործով չի պարզել հանցագործության իրական հանգամանքները:

Բացի այդ, Հայրապետ Հայրապետյանը խախտել է քրեական գործում առկա փաստաթղթերը ցուցակագրելու՝ քրեադատավարական օրենքով սահմանված կարգը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ ավագ քննիչ Հայրապետ Հայրապետյանը, հանդիսանալով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված N 16132314 քրեական գործով դատավարության մասնակից, նախաքննության ընթացքում օրենքով սահմանված կարգով պարտականությունները ոչ պատշաճ է կատարել խախտելով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 30-րդ հոդվածի 4-րդ մասի և 55-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի պահանջները՝ ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ և 31-րդ հոդվածի 9-րդ մասերով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2014թ. նոյեմբերի 17-ի N 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հայրապետ Հայրապետյանն օրենքով նախատեսված պարտականությունները կատարել է ոչ պատշաճ և դրանում առկա է նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

12 դեկտեմբերի 2014թ. քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Տիգրան Մուրադյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայաստանի Հանրապետության դատախազության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Մանվել Ալեքսանյանի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի և 21-ի միջնորդությունների առթիվ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Տիգրան Մուրադյանը NN 16801713 և 16138714 քրեական գործերի քննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս խախտել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, այն է՝ չի կատարել դատախազի ցուցումները, տևական ժամանակով դատավարական որևէ գործողություն չի կատարել, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների նկարագրական-պատճառաբանական մասը չի համապատասխանեցրել օրենքի պահանջներին, թերացել է կատարել քրեական գործով նախաքննության ժամկետը երկարացնելու մասին միջնորդության պատճառաբանական մասում նշված գործողությունները, ավելին՝ հաջորդ, նույնանման որոշման մեջ տառացիորեն արտատպել է նախորդ որոշման մեջ նշված

պատճառաբանությունները, և կրկին չի կատարել, զննման անստորագիր արձանագրությունում որպես ընթերականեր լրացրել է նույն բաժնի աշխատակազմի աշխատակիցների տվյալները, տուժողներին 10-օրյա ժամկետում չի ծանոթացրել փորձաքննությունների եզրակացություններին, իսկ մեղադրյալներին՝ ինչպես փորձաքննություն նշանակելու մասին որոշումներին, այնպես էլ դրանց եզրակացություններին, քրեական գործով չի պարզել հանցագործության իրական հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ ավագ քննիչ Տիգրան Մուրադյանը հանդիսանալով քրեական գործերով քննչական ու այլ դատավարական գործողություններ իրականացնող, ինչպես նաև՝ դրանք օրինական և ժամանակին կատարելու համար պատասխանատու, իր վարույթում քննվող՝ Արսեն Բարիկյանի կողմից անհայտ անձին խոշոր չափերով ապօրինի թմրամիջոց իրացնելու փորձ կատարելու դեպքի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված N 16801713, և եղբայրներ Սամվել ու Սարգիս Անտոնյանների կողմից խուլիգանություն կատարելու դեպքի առթիվ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված N 16138714 քրեական գործերի նախաքննության ընթացքում իր լիազորություններն իրականացնելիս պարբերաբար խախտել է օրենքը, և օրենքով նախատեսված պարտականությունները չի կատարել խախտելով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, 55-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի, 81-րդ հոդվածի 1-ին մասի և 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի պահանջները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ և 31-րդ հոդվածի 9-րդ մասերով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2014թ. նոյեմբերի 17-ի N 12Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Տիգրան Մուրադյանն իր լիազորություններն իրականացնելիս պարբերաբար խախտել է օրենքը, նախատեսված պարտականությունները չի կատարել և դրանում առկա է նրա մեղավորությունը:

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի բացակայության մասին

19 դեկտեմբերի 2014 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Դավիթ Միքայելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2014թ. հոկտեմբերի 21-ին և հոկտեմբերի 28-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Մ.Ալեքսանյանի միջնորդությունների առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Դ.Միքայելյանի վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 177 հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում, վերջինս իր լիազորություններն իրականացնելիս խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

1. Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով հարուցված թիվ 16131714 քրեական գործով ավագ դատախազ Մ.Ալեքսանյանը հայտնաբերել է քննիչ Դ.Միքայելյանի կողմից կատարված օրենքի հետևյալ խախտումները.

1) Չի պարզվել Ա.Ավագյանի և Ե.Սիրեկանյանի միջև «շատ հարազատական հարաբերությունների» բնույթը, որը կարող էր էական նշանակություն ունենալ հանցագործության բացահայտման ուղղությամբ հնարավոր վարկածներ առաջադրելու և ստուգելու համար:

2) Ա.Ավագյանի հարցաքննությամբ չի պարզվել Ե.Սիրեկանյանի բնակարանից հափշտակված իրերի, չիրկիզվող պահարանի չափսերը, ծավալը՝ հերքելու կամ հաստատելու գողությունը խմբի կողմից կատարելու վարկածը, ինչպես նաև չի պարզվել, թե գողության դեպքը հայտնի լինելուց երկու ժամ հետո ոստիկանության Մալաթիայի բաժնում հաղորդում տալիս որտեղից է նրա մոտ առաջացել Ե.Սիրեկանյանի բնակարանի դռան փականը հարմարեցված բանալու միջոցով բացելու վարկածը:

3) Միջոցներ չեն ձեռնարկվել պարզելու Ե.Սիրեկանյանի բնակության վայրը, ինչպես նաև բնակարանից առանձնապես խոշոր չափերով գույքի գաղտնի հափշտակություն կատարելուն վերաբերող հարցերը:

4) Միջոցներ չեն ձեռնարկվել սահմանված կարգով՝ դատարանի թույլտվությամբ, լսելու և ձայնագրելու Ե.Սիրեկանյանի և Ա.Ավագյանի հեռախոսային և կապի միջոցներով տարվող խոսակցությունները՝ պարզելու կատարված հանցագործությանը նրանց իսկ հանցակցության հանգամանքը:

5) Միջոցներ չեն ձեռնարկվել հայտնաբերելու և քննությանը հետաքրքրող հարցերի շուրջ հարցաքննելու Ե.Սիրեկանյանին և նրա կնոջ ազգականներին, մասնավորապես՝ ստուգելու Ա.Ավագյանի, Լ.Մատինյանի՝ Հեղինեի կողմից հանցանք կատարելու հանգամանքը, չեն խուզարկվել նաև նրանց բնակարանները:

Նկատի ունենալով, որ քննիչ Դ.Միքայելյանի կողմից վերը հիշատակված առերևույթ իրավախախտումները թույլ են տրվել մինչև 2014թ. հոկտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում՝ երբ Դ. Միքայելյանը դեռևս ՀՀ քննչական կոմիտեի ծառայող չէր հանդիսանում, ուստի հանձնաժողովը միաձայն որոշեց, որ «ՀՀ քննչական կոմիտեի մասին»

ՀՀ օրենքի 29- րդ հոդվածի իմաստով՝ վերջինիս արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

2. Քննիչ Դ.Միքայելյանի վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված թիվ 16146514 քրեական գործով հսկող դատախազ Մ.Ալեքսանյանի միջնորդության մեջ նշվել են քննիչի կողմից թույլ տրված հետևյալ իրավախախտումները.

1) Չի պարզվել, թե ի՞նչ պատճառով են ոստիկանության աշխատակիցները փնտրել Է. Դավթյանին, արդյո՞ք վերջինս չի կատարել այլ, այդ թվում՝ նրան մեղսագրվող համասեռ հանցագործություններ.

2) Չի պարզվել, թե բնակարանը Ա.Գևորգյանին վաճառել է Է.Դավթյանը, թե՝ մեկ այլ անձ:

3) Չի պարզվել և չի հարցաքննվել Է.Դավթյանի բնակարանի առաջին սեփականատեր Ս.Գևորգյանը, ով կարող էր հայտնել տվյալ գործով պարզելու ենթակա հանգամանքներ, մասնավորապես՝ Է.Դավթյանի գտնվելու, աշխատանքի վայրերի կամ զբաղմունքի տեսակի, հարազատական և բարեկամական կապերի մասին:

4) Չեն պարզվել տուժող Ռ.Գևորգյանի և նրա կնոջ՝ Լ.Մարտիրոսյանի անձնագրային տվյալները, գործի նյութերին չի կցվել վերջիններիս անձնագրերի թիվ 1 ձևի պատճենները:

Հսկող դատախազի միջնորդագրում արծարծված՝ վերը հիշատակված խախտումների մասով հանձնաժողովը որոշեց, որ իրավախախտման փաստը բացակայում է, քանի որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի քննիչը, կասեցված գործով՝ օրենքով նախատեսված դեպքերում կարող է կատարել քննչական համապատասխան գործողություններ:

5) Քննիչ Դ.Միքայելյանը չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը՝ 24 ժամվա ընթացքում դատախազություն չի ուղարկել Է.Դավթյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը:

Հանձնաժողովը միաձայն որոշեց, որ այս մասով առկա է իրավախախտման փաստը և քննիչ Դ.Միքայելյանի մեղավորությունը, քանի որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ մասի, վերջինս պարտավոր էր 24 ժամվա

ընթացքում դատախազություն ուղարկել Է.Դավթյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման պատճենը:

6) Քննիչը չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ չի իրականացրել գործի էջերի հերթական համարակալում դրանց կցման ժամանակագրական կարգով:

Ըստ քննիչ Դ.Միքայելյանի բացատրության քրեական գործն եղել է համարակալված վիճակում, սակայն խախտված է եղել դրանց կցման ժամանակագրական կարգը, որն իր կողմից թույլ տված տեխնիկական վրիպակի արդյունք է:

Հանձնաժողովը որոշեց, որ խախտման փաստն առկա է, քանի որ գործի էջերի հերթական համարակալումը կատարվել է ժամանակագրական կցման կարգի խախտմամբ, սակայն հանձնաժողովը գտավ, որ դա քննիչի կողմից թույլ տրված տեխնիկական վրիպման հետևանք է, որը տվյալ գործի շրջանակներում չի կարող համարվել օրենքի էական խախտում:

7) Չեն պարզվել Է.Դավթյանի վերաբերյալ տվյալները՝ ունի արդյո՞ք ընտանիք, անշարժ կամ շարժական գույք:

Հանձնաժողովը, նկատի ունենալով որ, քրեական գործի կասեցման պահին պետք է պարզված լինեին Է.Դավթյանի վերաբերյալ վերը նշված տվյալները, որոշեց, որ իրավախախտման փաստը և քննիչ Դ. Միքայելյանի մեղավորությունն առկա են:

8) Տուժող չի ճանաչվել Լ.Մարտիրոսյանը, ում նույնպես պատճառվել է գույքային ու բարոյական վնաս:

Հանձնաժողովը գտնում է, որ դատախազի միջնորդագրում հստակեցված չէ, Լ.Մարտիրոսյանին պատճառված գույքային և բարոյական վնասի բնույթը, որի պարագայում քննիչին վերաբերող իրավախախտման փաստը հիմնավորված չէ:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ քննիչ Դավիթ Միքայելյանը, հանդիսանալով գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար ինքնուրույն ուղղություն տալու, անհրաժեշտ որոշումներ կայացնելու, քրեադատավարական օրենքի դրույթներին համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ իրականացնող, ինչպես նաև դրանք օրինական ու ժամանակին կատարելու համար պատասխանատվություն կրող պաշտոնատար անձ, իր վարույթում քննվող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով 19.08.2014թ. հարուցված թիվ 16146514 քրեական գործի նախաքննության ընթացքում խախտել է Հայաստանի

Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով և հիմք ընդունելով քվեարկության արդյունքները.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 16131714 քրեական գործով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Դավիթ Միքայելյանի արարքում «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով՝ բացակայում է իրավախախտման փաստը, (7 կողմ, 0 դեմ):

2. Թիվ 16146514 քրեական գործով.

1) ՀՀ ոստիկանության աշխատակիցներին չպարզելու և նրանցից Է.Դավթյանի վերաբերյալ տեղեկություններ ձեռք չբերելու դրվագով՝ Դ.Միքայելյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, (7 կողմ, 0 դեմ):

2) Ա. Գևորգյանի բնակարանը Է.Դավթյանի կողմից վաճառելու հանգամանքը չպարզելու դրվագով՝ Դ. Միքայելյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, (7 կողմ, 0 դեմ):

3) Բնակարանի առաջին սեփականատեր Ս.Գևորգյանին չպարզելու և չհարցաքննելու դրվագով՝ Դ.Միքայելյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, (7 կողմ, 0 դեմ):

4) Ռ.Գևորգյանի և նրա կնոջ՝ Ա.Մարտիրոսյանի անձնագրային տվյալները չպարզելու և գործի նյութերին վերջիններիս անձնագրերի թիվ 1 ձևի պատճենները չկցելու դրվագով՝ Դ.Միքայելյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, (7 կողմ, 0 դեմ):

5) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը չկատարելու դրվագով՝ առկա են իրավախախտման փաստն ու Դ.Միքայելյանի մեղավորությունը, (7 կողմ, 0 դեմ):

6) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները չկատարելու դրվագով՝ Դ.Միքայելյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, (7 կողմ, 0 դեմ):

7) Է.Դավթյանի վերաբերյալ տվյալները չպարզելու դրվագով՝ Դ.Միքայելյանի արարքում առկա է իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը, (6 կողմ, 1 դեմ):

8) Լ.Մարտիրոսյանին տուժող չճանաչելու դրվագով՝ Դ.Միքայելյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, (7 կողմ, 0 դեմ):

3. Սույն որոշման օրինական անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի բացակայության մասին

23 դեկտեմբերի 2014 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Արման Երիցյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Մ.Ալեքսանյանի 27.10.2014թ. թիվ 16101414 և 06.11.2014թ թիվ 16801713 քրեական գործերով օրենքի խախտումներ թույլ տալու տալու համար նույն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Արման Երիցյանի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու մասին միջնորդությունների առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով և 34-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում Ա.Երիցյանն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, մասնավորապես.

1. Թիվ 16101414 քրեական գործով նախաքննության ժամկետը 2 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին 27.08.2014թ. որոշումը քննիչը

պատճառաբանել է նրանով, որ բջջային կապի 3 օպերատորներից չեն ստացվել պահանջվող վերծանումները և որոշումը քննչական բաժնի պետի տեղակալ Ա.Վարդանյանի կողմից 27.08.2014թ. ստորագրած ուղեկցական նամակով ուղարկել է վարչական շրջանի դատախազություն: Մինչդեռ, մինչև նշված որոշումը դատախազություն ուղարկելը՝ 25.08.2014թ. <<ԱրմենՏել>> ՓԲԸ-ից արդեն իսկ ստացված են եղել և քննիչին մակագրված են եղել պահանջվող վերծանումները՝ քննիչը հիշյալ որոշման մեջ մտցրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Նկատի ունենալով, որ ավագ քննիչ Ա.Երիցյանի կողմից վերը հիշատակված առերևույթ իրավախախտումները թույլ են տրվել մինչև 2014թ. հոկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում, երբ վերջինս դեռևս ՀՀ քննչական կոմիտեի ծառայող չէր հանդիսանում, ուստի հանձնաժողովը միաձայն որոշեց, որ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով՝ վերջինիս արարքում բացակայում է իրավախախտման փաստը

2. Նախաքննության ժամկետը երկու ամսով՝ մինչև 01.11.2014թ. երկարացնելուց հետո ավելի քան 50 օր որևէ քննչական կամ դատավարական գործողություն չի կատարել. այն է՝ հետամուտ չի եղել բջջային կապի երկու օպերատորների կողմից 15.08.2014թ. իր ուղարկած գրության պահանջների կատարմանը, ինչպես նաև հետևողական չի եղել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով սահմանված կարգով, ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնին 25.06.2014թ., 04.09.2014թ և 01.10.2014թ. տրված նույնաբովանդակ հանձնարարությունների կատարմանը:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն գտավ, որ քննիչի կողմից քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով տրվել են համապատասխան հարցումներ և հանձնարարականներ: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում որևէ իրավական ընթացակարգ, որի շրջանակներում քննիչը պետք է հետամուտ լիներ որպեսզի կապի օպերատորները կատարեին գրության պահանջները կամ ոստիկանության Մալաթիայի բաժնի աշխատակիցները կատարեին քննիչի կողմից տրված հանձնարարականները: ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Ավագ քննիչ Ա. Երիցյանի վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված թիվ 16801713 քրեական գործով հսկող դատախազ Մ.Ալեքսանյանի միջնորդության մեջ նշվել է քննիչի կողմից թույլ տրված հետևյալ իրավախախտումը.

Ավագ քննիչ Ա.Երիցյանը նշված քրեական գործը վարույթ է ընդունել 14.10.2014թ և առ 06.11.2014թ. որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի կատարել: Վերջինիս կողմից կատարված միակ դատավարական գործողությունը՝ նախաքննության ժամկետը մեկ ամսով երկարացնելու մասին 04.11.2014թ. որոշում կայացնելն է:

Ըստ ավագ քննիչ Ա.Երիցյանի բացատրության, հիշյալ քրեական գործը բաղկացած է եղել երեք հատորից և քրեական գործին լիարժեք ծանոթանալու համար իրենից պահանջվել է 10-15 օր: Այնուհետև, ծանրաբեռնվածության պատճառով չի հասցրել քրեական գործը վերլուծել, քննության պլան չի կազմել և հսկող դատախազի կողմից նախկինում տրված ցուցումի պահանջները չի կատարել:Նշել է նաև,որ ֆիզիկապես հնարավորություն չի ունեցել անդրադառնալ նշված քրեական գործին, քանի որ վարույթում ունեցել է ևս 22 քրեական գործ՝ 7 մեղադրյալներով:

Հանձնաժողովը նկատի ունենալով, որ քրեական գործը բաղկացած է եղել երեք հատորից և գործին պատշաճ ծանոթանալու համար 23 օրը ողջամիտ ժամկետ է, ընդ որում քննիչի վարույթում միաժամանակ քննվել է 22 քրեական գործ, կալանքի տակ գտնվել է 7 մեղադրյալ, քրեական գործի նյութերին ծանոթանալու պատճառաբանությամբ միաձայն որոշեց, որ նշված փաստական հանգամանքների պայմաններում սույն դրվագով իրավախախտման փաստը բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 16101414 քրեական գործով 27.08.2014թ նախաքննության ժամկետը 2 ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին որոշման մեջ որպես պատճառաբանություն իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ մտցնելու դրվագով Ա.Երիցյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ):

2. Նախաքննության ժամկետը երկու ամսով՝ մինչև 01.11.2014թ. երկարացնելուց հետո ավելի քան 50 օր քննչական կամ այլ դատավարական գործողություն չկատարելու, բջջային կապի երկու օպերատորներից 15.08.2014թ. իր ուղարկած գրության պահանջների կատարմանը հետամուտ չլինելու, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետով սահմանված կարգով, ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնին 25.06.2014թ., 04.09.2014թ և 01.10.2014թ. տրված նույնաբովանդակ հանձնարարությունների կատարմանը հետևողական չլինելու դրվագով Ա.Երիցյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ):

3. Թիվ 16801713 քրեական գործը 14.10.2014թ. վարույթ ընդունելուց հետո մինչև 06.11.2014թ. որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություններ չկատարելու դրվագով Ա.Երիցյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ):

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

23 դեկտեմբերի 2014 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Սուրեն Դումանյանի նկատմամբ հարուցված կարգապահական, վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2014թ. նոյեմբերի 05-ին Երևան քաղաքի դատախազության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Մ.Ալեքսանյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված թիվ 16127314 և 118-րդ և 177-րդ հոդվածի 2 րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված թիվ 16127514 քրեական գործերի նախաքննության ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Սուրեն Դումանյանն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, մասնավորապես.

1 Հանցավոր գործողության օբյեկտ հանդիսացող պայուսակը, տուժող Կիմա Ստեփանյանից առգրավել է դեպքից 2.5 ամիս անց՝ 05.08.2014թ.-ին, դրա զննաթյանը տուժողին մասնակից չի դարձրել:

2. Զննությամբ չի արձանագրել պայուսակի աստառի պատռվածքի չափերը պարզելու թե արդյոք հնարավոր է աստառի տակ պահել 1.200 ԱՄՆ դոլար 100 ԱՄՆ դոլար արժողությամբ թղթադրամներով և 96 հատ 20.000 արժողությամբ ՀՀ թղթադրամներով.

3. Վերը նշված պայուսակը քննիչի որոշմամբ իրեղեն ապացույց է ճանաչվել և գործի նյութերին կցվել մի քանի ամիս անց:

4. Տուժող Կ.Ստեփանյանի բնակարանի զննություն չի կատարել՝ պարզելու հանցագործության հետքերն ու գործի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները:

5. Փաստաթղթերը քրեական գործին կցել է կամայականորեն՝ առանց ժամանակագրական կարգի պահպանման:

6. Քրեական գործի նյութերում բացակայում է թիվ 16127514 քրեական գործը հարուցելու և վարույթ ընդունելու մասին 31.05.2014թ. որոշումը:

7. 04.08.14թ. կատարած տուժող Կ.Ստեփանյանի լրացուցիչ հարցաքննությունը, որին մասնակցել է տուժողի ներկայացուցիչ Մ.Եսայանը, ըստ արձանագրությունում կատարած գրառման սկսվել է ժամը 12:00-ին և ավարտվել ժամը 13:00-ին, միաժամանակ նույն օրը ժամը 12:15-ին սկսել և 12:30-ին ավարտել է տուժող Կ.Ստեփանյանի պայուսակի առգրավումը, որին մասնակցել է տուժողը և տուժողի ներկայացուցիչը:

8. Դեպքից 4 ամիս անց միայն՝ 19.09.2014թ. հսկող դատախազի 29.07.2014թ. ցուցումից հետո գրություն է ուղարկել «Շտապօգնություն» ՓԲԸ ստանալու նշված օրը երկու անգամ Կ.Ստեփանյանի բնակարանից կատարված կանչերի թերթիկների պատճեններն ու Կ.Ստեփանյանին բուժօգնություն ցուցաբերած բուժաշխատակիցների տվյալները:

Նկատի ունենալով, որ քննիչ Ս.Դումանյանի կողմից վերը հիշատակված՝ 1-8-րդ կետերով առերևույթ իրավախախտումները թույլ են տրվել մինչև 2014թ. հոկտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում, երբ վերջինս դեռևս ՀՀ քննչական կոմիտեի ծառայող չէր հանդիսանում, ուստի հանձնաժողովը միաձայն որոշեց, որ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով՝ վերը շարադրված դրվագներով, վերջինիս արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

9. Քննիչ Ս.Դումանյանի կողմից կատարված՝ տուժող Կիմա Ստեփանյանի լրացուցիչ հարցաքննության 04.08.2014թ. թվագրված արձանագրության համակարգչային շարվածքում «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի» բառերը սպիտակ նյութով ջնջելու և միաժամանակ, նույն տողում «քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ

Ս.Ա.Դումանյան» տպագիր գրառումը կատարելու առումով (ինչն, ըստ հսկող դատախազի վկայում է այն մասին, որ քննիչը նշված արձանագրությունը կազմել և գործի նյութերին է կցել 2014թ. սեպտեմբերի 4-ից հետո, երբ հաստատվել է ՀՀ քննչական կոմիտեի կառուցվածքը, անվանացանկն ու հաստիքացուցակը): Համաձայն քննիչ Ս.Դումանյանի բացատրության՝ ոգևորված լինելով քննչական կոմիտեի ստեղծմամբ. տուժողի լրացուցիչ հարցաքննության ձևաթղթում մտցրել է «Մալաթիա-Սեբաստիա Վարչական շրջանի քննչական բաժին, քննիչ, արդարադատության լեյտենանտ Ս.Դումանյան» գրառումը:Այնուհետև Կ.Ստեփանյանի հարցաքննությունից հետո՝ նկատելով այդ վրիպակը, սպիտակեցնող նյութով ջնջել է «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի» գրառումը: Հետին ամսաթվով ցուցմունք վերցնելու հանգամանքը մերժել է և նշել, որ իր նշած բոլոր ժամանակագրական տվյալները ճիշտ են:

Հանձնաժողովը գտավ, որ այդ դրվագով բավարար տվյալներ ձեռք չեն բերվել քննիչի կողմից վերը հիշատակված քննչական գործողությունը 2014 թվականի սեպտեմբերի 4-ից հետո կատարելու վերաբերյալ, ուստի ղեկավարվելով անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի՝ չփարատված կասկածներն մեկնաբանվում են հօգուտ իրավախախտման մեջ կասկածվող անձի՝ իրավախախտման փաստը բացակայում է:

10. ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնից 23.10.2014թ. ստացած՝ Կ.Ստեփանյանի մարմնական վնասվածքների վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության եզրակացության կապակցությամբ քննիչ Ս.Դումանյանի կողմից որևէ դատավարական գործողություն չկատարելու դրվագով, հանձնաժողովը, հիմք ընդունելով քննիչի բացատրությունն այն մասին, որ վերոհիշյալ եզրակացությունը ստանալուց հետո այն ծանոթացրել է տուժողին, որից հետո եզրակացության հետ կապված որևէ գործողություն չի կատարել, քանի որ տուժող Կ.Ստեփանյանին ծեծի ենթարկած անձինք այդ պահին արդեն բացակայել են ՀՀ-ից: Բացի այդ, նշված եզրակացության շուրջ քննություն կատարելու վերաբերյալ հսկող դատախազի կողմից ցուցում չի տրվել, և ողջամտորեն չի ակնկալվել որևէ քննչական կամ այլ դատավարական գործողության կատարում: Ուստի, նշված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ իրավախախտման փաստը բացակայում է:

11. Դեպքից շուրջ 2 ամիս անց՝ 25.07.2014թ. Անդրանիկ, Լյուբա և Ռոբերտ

Ստեփանյանների կողմից ՀՀ սահմանը հատելու վերաբերյալ տեղեկատվություններ ստանալու կապակցությամբ ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչություն հարցում ուղարկելու դրվագով, հանձնաժողովը որոշեց, որ քննիչի կողմից ուշացումով հարցում կատարելը «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով օրենքի կոպիտ խախտում չի համարվում, քանի որ այն որևէ հետևանքներ չի առաջացրել վերոհիշյալ անձինք մինչև քրեական գործ հարուցելն արդեն իսկ բացակայել են ՀՀ-ից, ուստի տվյալ դրվագով իրավախախտման փաստը բացակայում է:

Քննիչ Ս.Դումանյանի վարույթում քննված թիվ 16127314 քրեական գործով, վեջինիս կողմից թույլ տրված ներքոշարադրյալ իրավախախտումների կապակցությամբ հանձնաժողովը հաստատեց խախտման փաստի և Ա.Դումանյանի մեղավորության առկայությունը, մասնավորապես.

1. Հետամուտ չի եղել ժամանակին ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնից ստանալու Կ.Ստեփանյանի մարմնական վնասվածքների վերաբերյալ նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը:

2. Չի պարզել 19.05.2014թ. Կ.Ստեփանյանի հետ նրա բնակարան այցելած ոստիկաններին՝ նշված օրվա դեպքի հանգամանքների շուրջ նրանց հարցաքննելու նպատակով:

3. Լրիվությամբ չի կատարել հսկող դատախազի 29.07.2014թ. ցուցումի պահանջները՝ «Օրթոպեդիկ» ԲԿ-ից չի առգրավել Կ.Ստեփանյանի հիվանդության պատմությունը, 19.05.2014թ.Կ.Ստեփանյանի արտահայտած գանգատների ու այլ հանգամանքների շուրջ չի հարցաքննել նրա բնակարան կանչված շտապօգնության աշխատակիցներին:

4. Չի պարարզել 2013թ. նոյեմբերի վերջին «Օրթոպեդիկ» ԲԿ-ում Կ.Ստեփանյանի բուժման մեջ գտնվելու հանգամանքը, և 24.08.2014թ նախաքննական մարմնի կողմից անորոշ բովանդակությամբ հարցում է ուղարկվել ԲԿ-ի տնօրենին, որի պահանջը չի կատարվել:

5. «Շտապօգնություն» ՓԲԸ-ից ստանալով՝ Կ.Ստեփանյանի բնակարանից կատարված կանչերի թերթիկների պատճեններն ու Կ.Ստեփանյանին բուժօգնություն ցուցաբերած բուժաշխատակիցների տվյալները, չի պարզել՝ 19.05.2014թ., ժամը 18:09-ին 39-02-02 հեռախոսահամարից ով և ինչու է շտապօգնություն կանչել Կ.Ստեփանյանի

բնակարան, ինչու է բժիշկ Լալա Պողոսյանի գլխավորած թիվ 03 բրիգադան ցանկացել հոսպիտալացնել Կ.Ստեփանյանին, որից հրաժարվելու հայտարարություն է ստորագրել նրա հարս Հասմիկ Ստեփանյանը:

6. Միջոցներ չի ձեռնարկել հայտնաբերելու և հարցաքննելու Կ.Ստեփանյանին ծեծի ենթարկած Անդրանիկ և Լյուբա Ստեփանյանների դստերը՝ Ջուլիետա Ստեփանյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սույն որոշման պատճառաբանական-նկարագրական մասի 1-8-րդ կետերով արձանագրված արարքներով՝ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով քննիչ Ս.Դումանյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ).

2. Քննիչ Ս.Դումանյանի կողմից տուժող Կիմա Ստեփանյանի լրացուցիչ հարցքննության՝ 04.08.2014թ. թվագրված արձանագրության համակարգչային շարվածքում «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի» բառերը սպիտակ նյութով ջնջելու և միաժամանակ, նույն տողում «քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ Ս.Ա.Դումանյան» տպագիր գրառումը կատարելու դրվագով բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ).

3. ՀՀ ԱՆ ԴԲԴԴ կենտրոնից 23.10.2014թ. ստացած՝ Կ.Ստեփանյանի մարմնական վնասվածքների վերաբերյալ դատաբժշկական փորձաքննության եզրակացության կապակցությամբ քննիչ Ս.Դումանյանի կողմից որևէ դատավարական գործողություն չկատարելու դրվագով բացակայում է իրավւսխախտման փաստը (6 կողմ, 1 դեմ).

4. Դեպքից շուրջ 2 ամիս անց 25.07.2014թ. Անդրանիկ, Լյուբա և Ռոբերտ Ստեփանյանների կողմից ՀՀ սամանը հատելու վերաբերյալ տեղեկատվություններ ստանալու կապակցությամբ ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչությանը հարցում կատարելու դրվագով

բացակայում է իրավախախտման փաստը (7 կողմ, 0 դեմ).

5. ՀՀ ԱՆ ԴԲԳԳ կենտրոնից թիվ 16127514 քրեական գործով Կ.Ստեփանյանի մարմնական վնասվածքների վերաբերյալ նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը ժամանակին ստանալու վերաբերյալ հետամուտ չլինելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ).

6. 19.05.2014թ. Կ.Ստեփանյանի հետ նրա բնակարան այցելած ոստիկանների ինքնությունը չպարզելու և նրանց դեպքի հանգամանքների շուրջ չհարցաքննելու դրվագով քննիչ Ս Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ).

7. Հսկող դատախազի 29.07.2014թ. ցուցումի պահանջները՝ «Օրթոպեդիկ» ԲԿ-ից Կ.Ստեփանյանի հիվանդության պատմությունն առգրավելու, 19.05.2014թ.Կ.Ստեփանյանի արտահայտած գանգատների ու այլ հանգամանքների շուրջ նրա բնակարան այցելած շտապօգնության աշխատակիցներին չհարցաքննելու մասով լրիվությամբ չկատարելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ).

8. 2013թ. նոյեմբերի վերջին «Օրթոպեդիկ» ԲԿ-ում Կ.Ստեփանյանի բուժման մեջ գտնվելու հանգամանքը չպարզելու և 24.08.2014թ. ԲԿ-ի տնօրենին անորոշ բովանդակությամբ հարցում կատարելու դրվագով՝ քննիչ Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ).

9. 19.05.2014թ., Ժամը 18:09-ին 39-02-02 հեռախոսահամարից Կ.Ստեփանյանի բնակարան շտապօգնություն կանչելու, վերջինիս հարսի՝ Հասմիկ Ստեփանյանի կողմից, Կ.Ստեփանյանին հոսպիտալացնելու վերաբերյալ բժիշկների առաջարկը մերժելու դրվագով՝ քննիչ Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը (7 կողմ. 0 դեմ).

10. Կ.Ստեփանյանին ծեծի ենթարկած Անդրանիկ և Լյուբա Ստեփանյանների դստերը՝ Ջուլիետա Ստեփանյանին հայտնաբերելու և հարցաքննելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագով քննիչ Ս.Դումանյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը (7 կողմ, 0 դեմ).

11. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի բացակայության մասին

16 հունվարի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սերաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Սամվել Միքայելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

2014թ. հոկտեմբերի 21-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Մ.Ալեքսանյանի միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է. որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս.Միքայելյանի վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում վերջինս իր լիազորություններն իրականացնելիս խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով հարուցված թիվ 16136714 քրեական գործով ավագ դատախազ Մ.Ալեքսանյանը հայտնաբերել է քննիչ Ս. Միքայելյանի կողմից կատարված օրենքի հետևյալ խախտումները. Քննիչը դեռևս 12.07.2014թ. Ս.Գրիգորյանին որպես կասկածյալ հարցաքննելու ընթացքում, արձանագրելով նրա խոստովանական ցուցմունքներն այն մասին, որ նա գողությունը կատարել է Վարդաշենի թիվ 9 ուսումնարանի ավտոմեխանիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Արթուրի հետ և 07.08.2014թ. ունենալով ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնից՝ վերոհիշյալ գրությամբ ստացված տեղեկություն, որ Վարդուշենի «ուսումնարանի 2-րդ կուրսում սովորում է Արթուր Դանիելյանը, ով Ա.Գրիգորյանի հետ ընկերական կամ մտերմական կապեր չունի, նրան ճանաչում է, ուսումնարանից», չի համադրել նշված տվյալները, չի ստուգել Ա.Դանիելյանի այլուրեքությունը՝ հերքելու կամ հաստատելու վերջինիս մեղսակցությունը նշված հանցագործությանը:

- Երևան քաղաքի թիվ 9 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն Ռ.Տոպոլյանին որպես վկա հարցաքննելիս չի պարզել՝ ուսումնարանում Ա.Դանիելյան տվյալներով ուսանող կա,թե ոչ:
- Դատահամակարգչատեխնիկական և դիմանկարային համալիր փորձաքննության հետազոտման համար լրացուցիչ նյութեր տրամադրելու մասին փորձագետի 22.09.2014թ. միջնորդությունը քննիչը բավարարել է ավելի քան 20 օր անց՝ 13.10.2014թ-ին:

- Չի զննվել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ից 16.10.2014թ. ստացված՝ դեպքր օրը մեղադրյալ Ա.Գրիգորյանի կողմից օգտագործվող հեռախոսահամարների զանգերի վերծանումները պարունակող լազերային սկավառակը:
- Խանութի լրացուցիչ զննություն կատարելու փոխարեն, լուսանկարահանել և դեպքի վայրի զննության՝ դեռևս 15.07.2014թ-ին կազմված արձանագրությանը կցել, ավելացրել է լուսանկարչական աղյուսակ:
- Խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը՝ քրեական գործի էջերի հերթական համարակալումն իրականացրել է չպահպանելով դրանց կցման ժամանակագրական կարգը:
- Չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Նկատի ունենալով, որ քննիչ Ս.Միքայելյանի կողմից վերը հիշատակված առերևույթ իրավախախտումները, բացի դատահամակարգչատեխնիկական և դիմանկարային համալիր փորձաքննության հետազոտման համար լրացուցիչ նյութեր ուշ տրամադրելուց և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ից 16.10.2014թ. ստացված՝ դեպքի օրը մեղադրյալ Ա.Գրիգորյանի կողմից օգտագործվող հեռախոսահամարների զանգերի վերծանումները պարունակող լազերային սկավառակը չզննելու դրվագից թույլ են տրվել մինչև 2014 թվականի հոկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում՝ երբ Ս.Միքայելյանը դեռևս ՀՀ քննչական կոմիտեի ծառայող չէր հանդիսանում, ուստի հանձնաժողովը միաձայն որոշեց, որ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով՝ վերջինիս արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկեց Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ս.Միքայեյանին վերաբերող առերևույթ իրավախախտումները ըստ ստորև նշված դրվագների:

1. Դատահամակարգչատեխնիկական և դիմանկարային համալիր փորձաքննության հետազոտման համար լրացուցիչ նյութեր տրամադրելու մասին փորձագետի 22.09.2014թ. միջնորդությունը քննիչը բավարարել է ավելի քան 20 օր անց՝ 13.10.2014թ-ին:

Քննիչ Ս-Միքայելյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ տուժողի համակարգիչը փորձագետին շուրջ 20 օր անց է տրամադրել վերջինիս խնդրանքով, քանի որ այն օգտագործում էր խանութի տեսախցիկները աշխատացնելու նպատակով և նորը ձեռք բերելուց հետո է միայն կարողացել տրամադրել այն:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Ս.Միքայեյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ քննիչի կողմից առգրավված նյութերը փորձագետին ներկայացվել են ուշացումով, սակայն այն «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի իմաստով չի համարվում կոպիտ խախտում, քանի որ քրեական գործով չի հանգեցրել որևէ փաստական տվյալի կորստի: Ավելին, քննիչը նպատակ է ունեցել ապահովել տուժողի իրավունքները՝ կանխելու տուժողի կրկնակի վիկտիմիզացիան, քանի որ համակարգիչն անհապաղ առգրավելու պայմաններում խանութի վերահսկողուկան համակարգը չէր գործի:

2. Չի զննվել «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ից 16.10.2014թ. ստացված՝ դեպքի օրը մեղադրյալ Ա.Գրիգորյանի կողմից օգտագործվող հեռախոսահամարների զանգերի վերծանումները պարունակող լազերային սկավառակը:

Քննիչ Ս.Միքայելյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ ստացված վերծանումները պարունակող լազերային սկավառակը չի զննել, պլանավորելով այն զննել «Օրանժ-Արմենիա» ՓԲ ընկերությունից ևս վերծանումները ստանալուց հետո, դրանք իրար հետ համադրելու նպատակով:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննիչ Ս.Միքայելյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտումը «ՀՀ քննչական կոմիտեի մասին», ՀՀ օրենքի 29 -րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի իմաստով չի համարվում կոպիտ խախտում, քանի որ քննիչը, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 3-րդ մասի լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ. Քրեական գործով նախաքննության ընթացքում քննիչ Ս.Միքայելյանը պլանավորել է «Ղ.Տելեկոմ» ՓԲ ընկերությունից ստացված լազերային սկավառակում պարունակվող զանգերի վերծանումների զննությունը կատարել «Օրանժ-Արմենիա» ՓԲ ընկերությունից ստացվող լազերային սկավառակում պարունակվող զանգերի վերծանումների հետ համատեղ, դրանք միմյանց հետ համադրելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1 ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դատահամակարգչատեխնիկական և դիմանկարային համալիր փորձաքննության հետազոտման համար լրացուցիչ նյութեր տրամադրելու մասին փորձագետի 22.09.2014թ. միջնորդությունը քննիչի կողմից ավելի քան 20 օր անց բավարարելու դրվագով՝ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով քննիչ Ս.Միքայելյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը (6 կողմ 0 դեմ).

2.«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ից 16.10.2014թ. ստացված՝ դեպքի օրը մեղադրյալ Ա.Գրիգորյանի կողմից օգտագործվող հեռախոսահամարների զանգերի վերծանումները պարունակող լազերային սկավառակը չզննելու դրվագով «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք 29-րդ հոդվածի իմաստով քննիչ Ս. Միքայելյանի գործողություններ բացակայում է իրավախախտման փաստը (5 կողմ 1 դեմ).

3 Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

16 հունվարի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Խաչատուր Նավասարդյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ Մ.Ալեքսանյանի 19.11.2014թ. թիվ 16141714 քրեական գործով օրենքի խախտումներ թույլ տալու համար նույն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Խաչատուր Նավասարդյանի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու մասին միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում Խ.Նավասարդյանն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, մասնավորապես.

1.Թիվ 16141714 քրեական գործով Խ.Նավասարդյանը 2014թ. նոյեմբերի 7-ին որոշում է կայացրել Թ.Գագուաին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և վերջինիս հայերեն լեզվով գրավոր ծանուցել է մեղադրյալի իրավունքների և պարտականությունների մասին՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը: Հիշյալ որոշման պատճենը վարչական շրջանի դատախազություն չի ուղարկել անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 14-րդ կետի և 202-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Բացի այդ, չի ուղարկվել նաև թիվ 16141714 քրեական գործի նյութերից թիվ 16141714/1 քրեական գործը անջատելու մասին 07.11.2014թ. կայացրած որոշման պատճենը:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն հաստատեց իրավախախտման փաստի և Խ.Նավասարդյանի մեղավորության առկայությունը, ինչի արդյունքում ոտնահարվել է մեղադրյալի իրավունքները, նրան չի տրվել վերը հիշատակված որոշմանն պատճենն իրեն հասկանալի լեզվով և հնարավորություն չի ունեցել այն բողոքարկելու:

2.Մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասում չի շարադրել մեղադրյալին բնութագրող հանգամանքները, իսկ կից դատական նիստին կանչվելու ենթակա ցուցակում չի նշել գործի այն էջերը, որոնք պարունակում են նրանց ցուցմունքները: Բացի այդ, մեղադրական եզրակացությանը կցված հավելվածում չի նշել տեղեկություններ իրեղեն ապացույցի, դրանց գտնվելու տեղի, դատական ծախսերի,

մեղադրյալի՝ կալանքի տակ գտնվելու ժամկետի մասին՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-271-րդ հոդվածներով սահմանված կանոնները:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն հաստատեց իրավախախտման փաստի և Խ.Նավասարդյանի մեղավորության առկայությունը, քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարական օրենսգրքով սահմանված մեղադրական եզրակացություն կազմելու ձևը:

3.Անհայտ անձի կողմից Թ.Գագուաին «Դիազեպամ» տեսակի հոգեմետ դեղամիջոց ապօրինի իրացնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով չի հարուցել քրեական գործ և այն չի առանձնացրել առանձին վարույթում՝ բավարարվելով միայն թիվ 16141714 քրեական գործից ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մաս անջատելու վերաբերյալ որոշում կայացնելով՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի և 184-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Բացի այդ, իրավական գնահատական չի տվել անհայտ անձի կողմից Թ.Գագուաին և Ռ.Քոչարյանին կանաբինոիդների խմբին պատկանող թմրամիջոցներ իրացնելու արարքին:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն հաստատեց քննիչի կողմից քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում թույլ տալու հանգամանքները:

4. Միջնորդություն չի ներկայացրել ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին՝ Ռ.Քոչարյանին ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ 44²-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելու համար:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն որոշեց, որ օրենսդրությամբ քննիչի կողմից նման միջնորդություն ներկայացնելու պարտականություն նախատեսված չէ և զուտ օրենսդրական բացի առումով քննիչի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:Միաժամանակ նշված դրվագով առաջարկվեց ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությանը ՀՀ քննչական կոմիտեի նախագահի անունից նախապատրաստել համապատասխան հանձնարարական՝ այսուհետ նման դեպքերում օրենսդրությամբ սահմանված ժամկետներում քննիչի կողմից միջնորդություն ներկայացնել հետաքննության մարմին:

5.Չի զննել 03.08.2014թ. Թ.Գագուաի անձնական խուզարկությամբ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁԱՊՎ-ի ծառայողների կողմից հայտնաբերված և առգրավված բջջային հեռախոսի 2 քարտերը, բացի այդ չի զննել նաև ,,Օրանժ Արմենիա,, ՓԲԸ-ից 20.10.2014թ. ստացված Թ.Գագուաի կողմից օգտագործվող 055-45-59-60 հեռախոսահամարի հեռախոսազանգերի վերծանումները պարունակող լազերային սկավառակը և զննությունների արդյունքներով չի կատարել համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն որոշեց,որ քննիչի կողմից առանց նշված գործողությունները կատարելու, նախաքննության ավարտ հայտարարելու և մեղադրական եզրակացությամբ քրեական գործը դատախազություն ուղարկելու պայմաններում քննիչի գործուղություններում առկա է քրեադատավարական օրենքի կոպիտ խախտում թույլ տալու հանգամանքը:

6.Լրացուցիչ չի հարցաքննել վկա Ռ. Քոչարյանին՝ 14.08.2014թ. կատարված փորձաքննությամբ նրա մազի և մեզի մեջ կանաբիոնիդների խմբին պատկանող թմրամիջոցների թմրալկալոիդների հետքեր հայտնաբերելու հանգամանքների շուրջ:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն որոշեց, որ քննիչի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը:Ռ.Քոչարյանին

ժամանակին հայտնաբերելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկվել, ինչի արդյունքում նախաքննության ընթացքում վերջինիս հայտնաբերել չի հաջողվել և նա 15.11.2014թ. հատել է ՀՀ սահմանը:

7. ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲ ընկերությունից չեն ստացվել / ի կատարումն դատարանի 05.08.2014թ. որոշման/ 2014թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում Ռ. Քոչարյանի 077-10-67-54 հեռախոսահամարի ելքային ու մուտքային հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների վերծանումները, դրանք սպասարկած ալեհավաք կայանների իրավաբանական հասցեներն ու վերծանումներում առկա բաժանորդների անձնագրային տվյալները, որոնցով անհրաժեշտ է կատարել համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն որոշեց,որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերով որևէ իրավական ընթացակարգ նախատեսված չէ քննիչի կողմից բջջային կապի օպերատորներին հիշեցում ուղարկելու վերաբերյալ և Խ.Նավասարդյանի գործողություններում բացակայում են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Թիվ 16141714 քրեական գործով Թ.Գագուաին ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու և վերջինիս հայերեն լեզվով գրավոր մեղադրյալի իրավունքների և պարտականությունների մասին ծանուցելու, ինչպես նաև հիշյալ որոշումը վարչական շրջանի դատախազություն չուղարկեու դրվագով գործողություններում ավագ քննիչ Խ.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (6 կողմ, 0 դեմ):

2.Մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասում մեղադրյալին բնութագրող հանգամանքները չշարադրելու, դատական նիստին կանչվելու ենթակա ցուցակում նրանց ցուցմունքները պարունակող գործի էջերը չնշելու, մեղադրական եզրակացությանը կցված հավելվածում իրեղեն ապացույցի, դրանց գտնվելու տեղի, դատական ծախսերի, մեղադրյալի՝ կալանքի տակ գտնվելու ժամկետի մասին տեղեկություններ չնշելու դրվագով ավագ քննիչ Խ.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (6 կողմ, 0 դեմ):

3.Անհայտ անձի կողմից Թ.Գագուաին ,,Դիազեպամ,, տեսակի հոգեմետ դեղամիջոց ապօրինի իրացնելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական գործ չհարուցելու և այն առանձին վարույթում չառանձնացնելու, ինչպես նաև Թ.Գագուաին և Ռ.Քոչարյանին անհայտ անձի կողմից կանաբինոիդների խմբին պատկանող թմրամիջոցներ իրացնելու արարքին իրավական գնահատական չտալու դրվագով ավագ քննիչ Խ.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (6 կողմ, 0 դեմ):

4.ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժին՝ Ռ.Քոչարյանին ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ 44^2-րդ հոդվածով նախատեսված

պատասխանատվության ենթարկելու համար միջնորդություն չներկայացնելու դրվագով ավագ քննիչ Խ.Նավասարդյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը,(6 կողմ, 0 դեմ):

5.Թ.Գագուաի անձնական խուզարկությամբ 03.08.2014թ. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՁԱՊՎ-ի ծառայողների կողմից հայտնաբերված և առգրավված բջջային հեռախոսի 2 քարտերը, ինչպես նաև ,,Օրանժ Արմենիա,, ՓԲԸ-ից 20.10.2014թ. ստացված վերջինիս կողմից օգտագործվող 055-45-59-60 հեռախոսահամարի հեռախոսազանգերի վերծանումները պարունակող լազերային սկավառակը չզննելու և զննության արդյունքներով համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելու դրվագով ավագ քննիչ Խ.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (6 կողմ, 0 դեմ):

6. Վկա Ռ. Քոչարյանին՝ 14.08.2014թ. կատարված փորձաքննությամբ նրա մազի և մեզի մեջ կանաբիոնոիդների խմբին պատկանող թմրամիջոցների թմրալկալոիդների հետքեր հայտնաբերելու հանգամանքների շուրջ լրացուցիչ չհարցաքննելու դրվագով ավագ քննիչ Խ.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (6 կողմ, 0 դեմ):

7.«Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերությունից (ի կատարումն դատարանի 05.08.2014թ. որոշման) 2014թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում Ռ. Քոչարյանի 077-10-67-54 հեռախոսահամարի ելքային ու մուտքային հեռախոսազանգերի, կարճ հաղորդագրությունների վերծանումները, դրանք սպասարկած ալեհավաք կայանների իրավաբանական հասցեներն ու վերծանումներում առկա բաժանորդների անձնագրային տվյալները չստանալու դրվագով ավագ քննիչ Խ.Նավասարդյանի գործողություններում բացակայում են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (6 կողմ, 0 դեմ):

8. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

16 հունվարի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ռուբեն Նազարյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Կենտրոն-Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Կ.Բատիկյանի 27.10.2014թ. թիվ 13209214, 11.11.2014թ թիվ 13209814

և 19.11.2014թ. թիվ 13205014 քրեական գործերով օրենքի խախտումներ թույլ տալու համար նույն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ռուբեն Նազարյանի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու մասին միջնորդությունների առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 133-րդ 1-ին մասի և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում Ռ.Նազարյանն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, մասնավորապես.

1) Ղևոնդ Ղալումյանի կողմից Յուլիա Զաքարյանի վստահությունը չարաշահելու և խաբեությամբ նրա գույքին տիրանալու դեպքի առթիվ հարուցված թիվ 13209214 քրեական գործով շուրջ մեկ ամսվա ընթացքում հարցաքննել է ընդամենը մեկ վկա՝ այսինքն չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն հաստատեց իրավախախտման փաստը և Ռ.Նազարյանի մեղավորության առկայությունը, հաշվի առնելով, որ գործով անցնող 4 անձանց ծանուցագրեր ուղարկելու և ծանուցագրում նշված օրը նրանց քննչական բաժին չներկայանալու պայմաններում ավագ քննիչ Ռ.Նազարյանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի կարգով որոշում չի կայացրել նրանց բերման ենթարկելու մասին: Բացի այդ, նշված ժամանակահատվածում քննիչի կողմից այլ ուղղությամբ նույնպես փաստացի քննություն չի կատարվել:

2) Է.Ադամյանի կողմից Ա.Մաթոսյանին ազատությունից ապօրինի զրկելու դեպքի առթիվ հարուցված թիվ 13209814 քրեական գործի նախաքննության ընթացքում՝ 2014թ. հոկտեմբերի 20-ին քրեական գործը վարույթ ընդունելուց հետո 15 օրում կատարել է ընդամենը մեկ քննչական գործողություն՝ 01.11.2014թ. հարցաքննել է տուժող Արմեն Մաթոսյանին, ով խնդրել է հարցաքննությունը տեղափոխել 03.11.2014թ., սակայն ոչ նշված օրը և ոչ էլ հետագայում տուժողին չի հարցաքննել՝ անտեսելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

-Դեպքի իրական հանգամանքները, դրան մասնակցած անձանց ինքնությունը, յուրաքանչյուրի արարքները պարզելու, միջադեպի մասին տեղեկություններ ունեցող անձանց հայտնաբերելու վերաբերյալ հանձնարարություն չի տվել հետաքննության մարմնին, չնայած, որ դրա անհրաժեշտությունը ակնհայտ էր:

Հանձնաժողովը նշված դրվագով միաձայն գտավ, որ առկա է իրավախախտման փաստը և Ռ.Նազարյանի մեղավորությունը, հաշվի առնելով, որ քրեական գործը վարույթում քննվելու ժամանակահատվածում ,,Վեյվ,, ակումբի աշխատակիցներին չի հարցաքննել, հրատապ հանձնարարություն չի տվել հետաքննության մարմնին դեպքի իրական հանգամանքները, դրան մասնակցած անձանց ինքնությունը, յուրաքանչյուրի արարքները պարզելու ուղղությամբ: Նշված ժամանակահատվածում քննիչի կողմից այլ ուղղությամբ նույնպես փաստացի քննություն չի կատարվել:

3) Քրեական գործի նյութերում բացակայում է թիվ 13209814 քրեական գործը վարչական շրջանների դատախազություն ուղարկելու վերաբերյալ 2014 թվականի հոկտեմբերի 28-ի գրությունը, ինչով խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Հանձնաժողովը նշված դրվագով միաձայն գտավ, որ ավագ քննիչ Ռ.Նազարյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը և վերջինիս մեղավորությունը,«ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իմաստով դա չի համարվում կոպիտ խախտում, քանի որ քրեական գործով չի հանգեցրել որևէ փաստական տվյալի կորստի:

4) Գ.Ջուլհակյանի կողմից Ա.Ալթունյանի վստահությունը չարաշահելու և նրա գույքին տիրանալու դեպքի առթիվ հարուցված թիվ 13205014 քրեական գործի նախաքննության ընթացքում մասնակիորեն է կատարել հսկող դատախազի 11.08.2014թ. ցուցումի պահանջները: Մասնավորապես՝ ա) 26.06.2014թ. որոշում է կայացրել Ա.Ալթունյանի կողմից տրամադրված բջջային հեռախոսում առկա կարճ հաղորդագրությունները վերծանելու համար դատատեսաձայնագրային փորձաքննություն նշանակելու մասին, որը նույն օրը բջջային հեռախոսի և բջջային հեռախոսահամարի քարտի հետ ուղարկել է ՀՀ <<Փորձագիտական բյուրո>> պետական ոչ առևտրային կազմակերպություն, սակայն արդյունքների վերաբերյալ շուրջ 45 օր որևէ տեղեկություն չի ստացել և արդյունքում այն ստացվել է երեք ամիս անց՝ 2014թ. սեպտեմբերի 27-ին: բ) Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2014թ. հուլիսի 11-ի որոշումը 2014թ. հուլիսի 15-ին ուղարկել է բջջային կապի երեք օպերատորներին՝ Գ.Ջուլհակյանի և Ա.Ալթունյանի կողմից շահագործվող բջջային հեռախոսահամարների, դրանց վերծանումների, դրանցում առկա բաժանորդների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: 2014թ. հուլիսի 29-ին <<ԱրմենՏել>> ընկերությունից ստացվել են պահանջվող վերծանումները,/զննության արձանագրություն չի կազմել, /, իսկ <<Ղ-Տելեկոմ>> և <<Օրանժ Արմենիա>> ընկերություններից վերծանումների ստացման ուշացման պատճառը պարզելու ուղղությամբ ոչինչ չի ձեռնարկել , արդյունքում ,<<Ղ-Տելեկոմ>> ընկերությունից վերծանումները ստացվել են 2014թ. սեպտեմբերի 22-ին, իսկ <<Օրանժ Արմենիա>> ընկերությունից ավելի ուշ:

5) 2014թ. հոկտեմբերի 2-ին որոշումներ է կայացրել Գ.Ջուլհակյանին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու, նրա նկատմամբ խափանման միջոց ընտրելու և հետախուզում հայտարարելու մասին: Նշված որոշումներում մեղադրյալի ծննդյան տարեթիվը սխալ է նշել: 29.10.2014թ. կրկին կայացրել է նույն որոշումները ճիշտ ծննդյան թվով:

Հանձնաժողովը նշված դրվագներով միաձայն գտավ, որ ավագ քննիչ Ռ.Նազարյանը հիշատակված առերևույթ իրավախախտումները թույլ է տվել մինչև 07.10.2014թ. ընկած ժամանակահատվածում, երբ վերջինս դեռևս ՀՀ քննչական կոմիտեի ծառայող չէր հանդիսանում, ուստի հանձնաժողովը որոշեց, որ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով վերջինիս գործողություններում բացակայում է

իրավախախտման փաստը, բացի այդ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերով որևէ իրավական ընթացակարգ նախատեսված չէ բջջային կապի օպերատորների կողմից իրենց պարտականությունների կատարումն ապահովելու ուղղությամբ:

6) Քրեական գործի նախաքննության ընթացքում չի կատարել հսկող դատախազի 17.10.2014թ. օրինական ցուցումի պահանջները՝

- չի հարցաքննել Գ.Ջուլհակյանի անվամբ հաշվառված հեռախոսահամարի վերծանումներում առկա բաժանորդներին՝ Պ.Բելովին և Ա.Տոնականյանին:

- Համապատասխան միջնորդություն չի ներկայացրել դատարան Ա.Զոզանյանի կողմից շահագործվող հեռախոսահամարների մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումներն ստանալու համար՝ չպահպանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները:

Բացի այդ, 2014թ. նոյեմբերի 4-ին որոշում է կայացրել քրեական գործի նախաքննության ժամկետը երկու ամսով մինչև 2015թ. հունվարի 11-ը երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, որոշման պատճառաբանական մասում նշելով, որ անհրաժեշտ է կատարել դատախազի վերը նշված ցուցումի պահանջները, սակայն հետագայում դրանք չի կատարել:

Հանձնաժողովը նշված դրվագներով միաձայն գտավ, որ ավագ քննիչ Ռ.Նազարյանի կողմից չի կատարվել հսկող դատախազի կողմից տրված առարկայական ցուցումի պահանջները, նշված ցուցումի դեմ առարկություններ չի ներկայացվել, այն դեպքում երբ պետք է անհապաղ կատարվեին ինչպես դատախազի ցուցումի պահանջները, այնպես էլ այլ անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ՝ ավելին նախաքննության ժամկետը երկարացրել է ցուցումի պահանջները կատարելու պատճառաբանությամբ, սակայն այդ ուղղությամբ ոչ մի գործողություն չի կատարել, ինչի արդյունքում դեպքի իրական հանգամանքները, Գ.Ջուլհակյանի հնարավոր հանցակիցները չեն պարզվել և քննիչի կողմից այլ ուղղությամբ նույնպես փաստացի քննություն չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Ղևոնդ Ղալումյանի կողմից Յուլիա Զաքարյանի վստահությունը չարաշահելու և խաբեությամբ նրա գույքին տիրանալու դեպքի առթիվ հարուցված թիվ 13209214 քրեական գործով անձանց ծանուցագրեր ուղարկելու և ծանուցագրում նշված օրը նրանց քննչական բաժին չներկայանալու պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի կարգով բերման ենթարկելու մասին որոշումներ չկայացնելու, այլ ուղղությամբ նույնպես փաստացի քննություն չկատարելու դրվագով ավագ քննիչ Ռ. Նազարյանի

գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (6 կողմ, 0 դեմ):

2. Է.Ադամյանի կողմից Ա.Մաթոսյանին ազատությունից ապօրինի զրկելու դեպքի առթիվ հարուցված թիվ 13209814 քրեական գործի նախաքննության ընթացքում ,,Վեյվ,, ակումբի աշխատակիցներին չհարցաքննելու, հետաքննության մարմնին դեպքի իրական հանգամանքները, դրան մասնակցած անձանց ինքնությունը, յուրաքանչյուրի արարքները պարզելու ուղղությամբ հրատապ հանձնարարություն չտալու և այլ ուղղությամբ նույնպես փաստացի քննություն չկատարելու դրվագով ավագ քննիչ Ռ.Նազարյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (6 կողմ, 0 դեմ):

3. Քրեական գործը վարչական շրջանների դատախազություն ուղարկելու վերաբերյալ 28.10.2014թ. գրությունը՝ թիվ 13209814 քրեական գործի նյութերից բացակայելու դրվագով Ռ.Նազարյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը, (6 կողմ, 0 դեմ):

4. Թիվ 13205014 քրեական գործով սույն որոշման պատճառաբանական-նկարագրական մասի 4-5 կետերով արձանագրված դրվագներով՝ ,,ՀՀ քննչական կոմիտեի մասին,, ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով ավագ քննիչ Ռ.Նազարյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը, (6 կողմ, 0 դեմ):

5. Թիվ 13205014 քրեական գործի նախաքննության ընթացքում հսկող դատախազի 17.10.2014թ. առարկայական ցուցումի պահանջները չկատարելու՝ Պ.Բելովին և Ա.Տոնականյանին չհարցաքննելու, ինչպես նաև Ա.Զոզանյանի կողմից շահագործվող հեռախոսահամարների մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումներն ստանալու համար համապատասխան միջնորդություն դատարան չներկայացնելու, այլ ուղղությամբ նույնպես փաստացի քննություն չկատարելու դրվագով ավագ քննիչ Ռ.Նազարյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (6կողմ, 0 դեմ):

6. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի բացակայության մասին

16. հունվարի 2014 թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Գարիկ Նահապետյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, քննիչին և քննչական բաժնի պետին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

Երևան քաղաքի դատախազ Ա. Դավթյանը 24.11.2014թ.-ի գրությամբ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության պետ Ջ.Ֆարխոյանին միջնորդել է ծառայողական քննություն անցկացնել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետ Վ. Մ. Մեսրոպյանի և ավագ քննիչ Գ. Նահապետյանի նկատմամբ՝ հետևյալ պատճառաբանություններով.

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Գ.Նահապետյանին վերագրող առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների:

1. Շուրջ մեկ ամիս տաս օր ավագ քննիչ Գ.Նահապետյանի կողմից որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի կատարվել:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի պետ Վ. Մ. Մեսրոպյանը և ավագ քննիչ Գ.Նահապետյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն են տվել այն մասին, որ շուրջ 1 ամիս տաս օր ավագ քննիչ Գ.Նահապետյանի կողմից որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի կատարվել, սակայն չի նշվել, թե որ ժամանակահատվածում 1 ամիս 10 օր որևէ գործողություն չի կատարվել, մինչդեռ առավելագույն ժամկետը, որ քննիչի կողմից գործողություն չի կատարվել եղել է 12.09.2014թ.-ից 07.10.2014թ.-ն ընկած ժամանակահատվածը, որի ընթացքում 25.09.2014թ.-ին կատարվել է խուզարկություն Ս. Ալոյանի բնակության վայրում, որը հանդիսանում է քննչական գործողություն:

Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ: Նախ, դատախազի գրությամբ հստակեցված չէ, թե ո՞ր ժամանակահատվածում 1 ամիս 10 օր գործողություն չի կատարվել, ինչը ստեղծում է վերագրվող առերևույթ իրավախախտման փաստական հիմքերի գնահատման անորոշություն: Բացի այդ, քրեական գործի ուսումնասիրությամբ չի հիմնավորվել քննիչի կողմից մեկ ամիս տաս օր քննչական որևէ գործողություն չկատարելու հանգամանքը: Առավելագույն ժամկետը, որ քննիչի կողմից գործողություն չի կատարվել 12.09.2014թ.-ից 02.10.2014թ.-ն ընկած ժամանակահատվածն է (որն ընդգրկում է 6 ոչ աշխատանքային օրեր), որի ընթացքում 25.09.2014թ.-ին Ս. Ալոյանի բնակության վայրում կատարվել է խուզարկություն: Նշված ժամանակահատվածում իրականացվել է «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումը և վարույթն իրականացնող մարմինը տեղեկացված լինելով այդ մասին, ելնելով օպերատիվ-հետախուզական մարմինների աշխատանքը չխաթարելու տակտիկական անհրաժեշտությունից, ձեռնպահ է մնացել նշված ժամանակահատվածում այլ գործողություններ կատարել: Բացի այդ, նախանական ուսումնասիրությամբ չի պարզվել հանգամանք, որը կապված լիներ հրատապ անհրաժեշտ գործողության հետ, ինչը չի վեր հանվել: (Գ.Թ. 95, 100-102, 104):

Հանձնաժողովը գտավ, որ նշված դրվագով քննիչ Գ.Նահապետյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը: /4 կողմ 1 դեմ/:

2. Դեպքից անմիջապես հետո քննիչը չի պարզել, թե ով է Ս. Ավդալյանին տարել հիվանդանոց և դրա շուրջ չի հարցաքննել բուժանձնակազմին, քննիչը չի պարզել, թե ով է զանգահարել շտապօգնություն, որ Ս. Ավդալյանին 2-րդ բուժմիավորումից տեղափոխեն «Մ. Հերացու» անվան հիվանդանոց: Չեն հարցաքննվել շտապ օգնության աշխատակիցները:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով քննիչի բացատրությունները և ուսումնասիրելով գործի նյութերը, գտնում է, որ քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ: Քրեական գործի ուսումնասիրությունից պարզվել է, որ դեպքից անմիջապես հետո՝ նույն օրը, քննիչի կողմից հարցաքննվել են վկաներ Հենրիկ Արամյանը, Մարտին Սարգսյանը, Ժիրայր Քյաբաբչյանը և Ալիսա Չիլինգարյանը (Գ.Թ. 11-17, 21-22), ովքեր Ս. Ավդալյանին հիվանդանոց տեղափոխելուց հետո գտնվել են հիվանդանոցում և ենթադրվել է, որ նրանցից ոմանք պետք է Ս. Ավդալյանին տեղափոխած լինեն հիվանդանոց, սակայն հարցաքննության ընթացքում պարզվել է, որ նրանցից ոչ ոք դեպքի պահին նրա հետ չի եղել և նրան չի տեղափոխել հիվանդանոց: Այսպիսով, դեպքից անմիջապես հետո քննիչի կողմից ձեռնարկվել են տվյալ պահին ողջամտորեն ակնկալվող քննչական գործողություններ՝ Ս. Ավդալյանին հիվանդանոց տեղափոխած անձանց շրջանակը պարզելու համար:

Քննիչի կողմից՝ բուժանձնակազմի, այդ թվում նաև «Շտապ օգնություն» ծառայության աշխատակիցների անձնական տվյալները պարզելու և հարցաքննելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: «Շտապ օգնություն» ծառայության աշխատակիցների անձնական տվյալները ճշտելու համար 07.10.2014թ.-ին հարցում է ուղարկվել, սակայն ստացվել է քրեական գործի նյութերին հակասող պատասխան, որից հետո 24.10.2014թ.-ին ևս մեկ հարցում է ուղարկվել: 05.11.2014թ.-ին ստացվել է անհրաժեշտ պատասխանը, որի հիման վրա նշված աշխատակիցներին ուղարկվել են ծանուցումներ, սակայն ծանուցման ծրարները նրանց կողմից չեն ստացվել և վերադարձվել են քննչական բաժին (Գ.Թ. 124, 133, 142, 173, 221):

Հանձնաժողովը գտավ, որ նշված 2 դրվագներով քննիչ Գ. Նահապետյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը: /4 կողմ 1 դեմ/:

3. Նախաքննության մարմինը չի պարզել ոստիկանության Կենտրոնական բաժնի գրության մեջ նշված՝ Ս. Ալոյանի կողմից «Մալիբու» սրճարանի մոտ Ս. Ավդալյանին դանակահարելու դեպքի հանգամանքները, չի հարցաքննել Ս. Ալոյանին և չի պարզել նրա առնչությունը կատարված դեպքի հետ: Չի պարզվել Ս. Ալոյանի անվամբ հաշվառված և օգտագործվող հեռախոսահամարները:

Քննիչը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ դեպքի իրական վայրը կարող է մատնացույց արվել միայն դեպքին մասնակից անձանց կողմից, սակայն տուժող Ս. Ավդալյանն իր գործողություններով չի աջակցել քննությանը և փորձել է թաքցնել դեպքի իրական հանգամանքները (նախկինում դատապարտված լինելով ՀՀ քրեական օրենսգրքի 138 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 112 հոդվածի 1-ին մասով, ՀՀ ԱՆ «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Նուբարաշեն կլինիկայում տուժողի մոտ

հայտնաբերվել է «Անձի փսիխոպատիկ գծեր» ախտորոշումը), որպիսի պարագայում անհնարին է, դեպքին այլ մասնակցի բացակայության պայմաններում, դեպքի իրական վայրը պարզելու հանգամանքը,

Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ նշված դրվագով քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտումների փաստը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ: Նախաքննության և օպերատիվ-հետախուզական մարմինների կողմից սույն քրեական գործի շրջանակներում ձեռնարկված բոլոր միջոցառումները վերջին հաշվով նպատակաուղղված են եղել Ս. Ալոյանի կողմից «Մալիբու» սրճարանի մոտ Ս. Ավդալյանին դանակահարելու դեպքի հանգամանքները պարզելուն: Նշված դրվագով քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստական հիմքերի որոշակիության տեսանկյունից պետք էր առարկայական ներկայացված լիներ, թե տուժողի համագործակցության բացակայության պայմաններում, դատախազը քննիչից ողջամտորեն ի՞նչ հանգամանքներ էր ակնկալում պարզել, որոնք չեն կատարվել:

Հանցագործության ենթադրյալ կատարող Ս. Ալոյանին հարցաքննել օբյեկտիվորեն հնարավոր չէր, քանի որ դեպքից հետո՝ 14.08.2014թ.-ին Ս. Ալոյանը մեկնել է ՀՀ-ից:

Ս. Ալոյանի անվամբ հաշվառված և օգտագործվող հեռախոսահամարները պարզելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու հանգամանքը հերքվել է, քանի որ գործի նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ գործի քննության ընթացքում քննիչը 05.11.2014թ.-ին գրություն է ուղարկել ՀՀ-ում բջջային կապ տրամադրող ընկերություններին, նշված տեղեկատվությունը ճշտելու համար (Գ.Թ. 105-106, 174-175, 178, 195):

Հանձնաժողովը գտավ, որ նշված դրվագով քննիչ Գ. Նահապետյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը: /4 կողմ 1 դեմ/:

4. Ստացված «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերծանումները կատարելուց հետո 20 օր շարունակ քննիչն այդ ուղղությամբ որևէ գործողություն չի կատարել:

Քննիչը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ նշված ժամանակահատվածում առկա չի եղել որևէ հրատապ գործողություն կատարելու անհրաժեշտություն: Թեև դատախազի կողմից նշվել է գործողություններ չկատարելու հանգամանքը, սակայն չի նշվել, թե գաղտնալսման շուրջ հատկապես ինչ գործողություններ պետք է կատարվեն: Նշված միջոցառման նպատակը եղել է հանցագործության իրական հանգամանքները պարզելը, որն էլ կատարվել է և նշված վերծանումները գաղտնազերծված վիճակում կցվել են քրեական գործի նյութերին (Գ.Թ. 143-160):

Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստը բացակայում է վերագրվող խախտման փաստական հիմքերի անորոշության պատճառաբանությամբ: Նշված դրվագով քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստա-
կան հիմքերի որոշակիության տեսանկյունից պետք էր առարկայական ներկայացվեր, թե «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերծանումները ստանալիս, չի պարզվել հանգամանք, թե 20 օրվա

ընթացքում քննիչը ողջամտորեն ի՞նչ հրատապ գործողություններ պետք է կատարեր, կամ ի՞նչ փաստական հանգամանքներ պետք է վերհաներ, որոնք չի կատարել:

Հանձնաժողովը գտավ, որ նշված դրվագով քննիչ Գ. Նահապետյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը: /5 կողմ 0 դեմ/:

5. Քննիչը չի ստուգել տուժողի ցուցմունքում նշված՝ ամրանների և մետաղյա ցցերի վրա վայր ընկնելու հետևանքով վնասվածքները ստանալու դատախազի ցուցումի հանգամանքները: Քննիչը չի պարզել տուժողի ցուցմունքում նշված՝ ինքնավնասմամբ մարմնի վրա առկա վնասվածքները ստանալու հանգամանքը:

Քննչական բաժնի պետը և քննիչը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն են տվել այն մասին, որ տուժող Ս. Ավդալյանի ցուցմունքը եղել է ակնհայտ անարժանահավատ, նա հրաժարվել է ցուցմունքը ստորագրել: Հետագայում տուժողը լրացուցիչ ցուցմունք է տվել, այն մասին, որ կատարվել է ինքնավնասում: Երևան քաղաքի դատախազի 19.11.2014թ.-ի որոշմամբ քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի 17.10.2014թ.-ին տրված գրավոր ցուցումի դեմ բերված բողոքը մասնակի բավարարվել է և ցուցումի՝ ինքնավնասում կատարելու ենթադրյալ հանգամանքը ստուգելու ու Ս. Ավդալյանի մարմնի քննում կատարելու մասը, վերացվել է: Բացի այդ, Ս. Ավդալյանի նշված ցուցմունքը ստուգելու ուղղությամբ գործողություններ կատարելը նպատակահարմար չէր, քանի որ վարույթն իրականացնող մարմինն արժանահավատ է համարել նրա կողմից դեռևս 12.08.2014թ.-ին «Հերացու անվան թիվ 1» ԲԿ-ում կատարված հայտարարությունն այն մասին, որ իրեն դանակահարել են և քննությունը կատարել է այդ ուղղությամբ, ինչը, տվյալ դեպքում, բխում է քրեական գործի նյութերից:

Քննչական բաժնի պետը և քննիչը հայտնեցին, նաև որ հետաքննության մարմինների կողմից 12.08.2014թ.-ից իրականացվել է գաղտնալսում, որի մասին վարույթն իրականացնող մարմինը բանավոր տեղեկացվել է, հետևաբար ձեռնարկված քննչական և դատավարական գործողություններն առաջնահերթ ուղղվել են դեպքի իրական հանգամանքների բացահայտմանը, այլ ոչ թե քննչական մարմնի ռեսուրսները վատնվել են տուժողի հակասական, մտացածին և հորինված մտքերի ստուգմանը: Բացի այդ, տուժողը ցուցմունքում նշել է, որ վայր է ընկել Երևան քաղաքի Հարավ-արևմտյան Բ2 թաղամասի Անդրանիկի փողոցի 131 շենքի «մոտակայքում», ինչը լայն և չմասնավորեցնող հասկացություն է: Տվյալ վայրը կոնկրետացնել հնարավոր չէ, քանի որ տուժող Ս. Ավդալյանը հրաժարվել է մասնակցել որևէ քննչական և դատավարական գործողության (Գ.Թ. 29, 81, 210-212):

Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ քննիչը, նշված դրվագով չկատարելով դատախազի ցուցումը, թույլ է տվել քրեադատավարական օրենքի խախտում, քանի որ համաձայն չլինելով ցուցումի հետ պարտավոր է այն բողոքարկել վերադաս դատախազին: Տվյալ դեպքում քննիչը չի կատարել ցուցումի պահանջը և չի բողոքարկել այն: Այնուամենայնիվ՝ նման պայմաններում ամրանների և մետաղյա ցցերի վրա վայր ընկնելու կամ ինքնավնասման հետևանքով տուժողի վնասվածքները ստանալու հանգամանքները պարզելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատախազի ցուցումը չկատարելը

չի հանգեցրել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքի կամ ազատության խախտմանը և չի խաթարել նախաքննության բնականոն ընթացքը:

Հանձնաժողովը գտավ, որ նշված 2 դրվագներով քննիչ Գ.Նահապետյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը: (5 կողմ 0 դեմ):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Շուրջ մեկ ամիս տաս օր որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չկատարելու դրվագով ավագ քննիչ Գ. Նահապետյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:
2. Դեպքից անմիջապես հետո Ս.Ավդալյանին հիվանդանոց տեղափոխողի, շտապօգնություն զանգահարողի ինքնությունները չպարզելու, բուժանձնակազմին չհարցաքննելու դրվագով ավագ քննիչ Գ.Նահապետյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:
3. Ոստիկանության Կենտրոնականի բաժնի գրության մեջ նշված՝ Ս.Ալոյանի կողմից «Մալիբու» սրճարանի մոտ Ս. Ավդալյանին դանակահարելու դեպքի հանգամանքները, ինչպես նաև Ս. Ալոյանի առնչությունը կատարվածի հետ չպարզելու դրվագով ավագ քննիչ Գ.Նահապետյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:
4. Ստացված «Հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների վերծանումները զննելուց հետո 20 օր որևէ գործողություն չկատարելու դրվագով ավագ քննիչ Գ.Նահապետյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:
5. Տուժողի ցուցմունքում նշված՝ ամրանների և մետաղյա ցցերի վրա վայր ընկնելու հետևանքով վնասվածքներ ստանալու, դատախազի ցուցումում նշված հանգամանքները, ինչպես նաև ինքնավնասմամբ մարմնական վնասվածքներ ստանալու հանգամանքները չպարզելու դրվագով ավագ քննիչ Գ.Նահապետյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

23 հունվարի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ստեփան Նավասարդյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Կ.Բատիկյանի 04.12.2014թ. թիվ 13804614 և 05.12.2014թ. թիվ 13142714 քրեական գործերով օրենքի խախտումներ թույլ տալու համար նույն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ստեփան Նավասարդյանի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու մասին միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի հատկանիշներով հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում Ս.Նավասարդյանն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը, մասնավորապես.

1. Լ.Քաղքցյանի կողմից գողություն կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում «Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերությունից ստանալով Կարեն Վլասյանի շահագործած բջջային հեռախոսահամարի բաժանորդային տվյալները՝ վերջինիս անհապաղ հայտնաբերելու և հարցաքննելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել, այլ միայն 13 օր անց ծանուցագիր է ուղարկել, իսկ ծանուցագրում նշված օրը քննչական բաժին չներկայանալու պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի կարգով որոշում չի կայացրել Կարեն Վլասյանին բերման ենթարկելու մասին:

Ավագ քննիչ Ս.Նավասարդյանը բացատրություն է տվել, որ իր կողմից Կարեն Վլասյանին հարցաքննության հրավիրելու նպատակով ծանուցագիրն ուշ է ուղարկվել, քանի որ մինչ այդ փորձել է հեռախոսով կապ հաստատել Կ.Վլասյանի հետ՝ նրան ավելի շուտ հարցաքննության կանչելու նպատակով: Ի վերջո չի կարողացել հեռախոսով կապվել Կ.Վլասյանի հետ, որից հետո՝ 10.11.2014թ.-ին ծանուցագիր է ուղարկել նրա հաշվառման հասցեով, սակայն Կարեն Վլասյանը նշանակված օրը հարցաքննության չի ներկայացել: Այնուհետև, մի քանի օր անց՝ 2014թ.-ի նոյեմբերի 19-ին հանձնարարություն է տվել ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնի Մարաշի բաժանմունքին՝ Կարեն Վլասյանին հայտնաբերելու և քննությանը ներկայացնելու ուղղությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածով սահմանված կարգով Կ.Վլասյանին բերման ենթարկելու մասին որոշում չի կայացրել, քանի որ մինչ այդ քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողներից բանավոր կերպով տեղեկացել է, որ նա բացակայում է հաշվառման հասցեից,

որպիսի պայմաններում ձևական էր դառնում բերման ենթարկելու մասին որոշում կայացնելը:

ՈՒսումնասիրելով նյութերը կարգապահական հանձնաժողովը պարզեց,որ փաստական հիմքերի նման պայմաններում՝ քննիչը դրսևորել է անգործություն և բավարար տեղեկություններ ունենալով,որ Լ.Քաղքցյանի բնակարանից գողություն կատարելու դեպքին հնարավոր է անմիջական առնչություն ունեցած լինի նաև Կ.Վլասյանը, վերջինիս ինքնությունը, նրա գտնվելու վայրը պարզելու, քննության կանչելու, կատարված հանցագործությանը նրա հնարավոր մասնակցության հանգամանքը հաստատելու կամ հերքելու ուղղությամբ ժամանակին և գործուն միջոցներ չի ձեռնարկել, որի հետևանքով հանցագործության իրական հանգամանքները չեն պարզվել, Լ.Քաղքցյանի կատարած հանցավոր արարքին հնարավոր մասնակցություն ունեցած Կ.Վլասյանը մինչ օրս չի հայտնաբերվել: Հանձնաժողովը գտավ,որ որ քննիչի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

2. Չի պարզել Լ.Քաղքցյանի օգտագործած բջջային հեռախոսահամարը, չի ստացել նրա և Կ.Վլասյանի բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումները, չի զննել նաև Լ.Քաղքցյանի հեռախոսում առկա՝ Կ.Վլասյանից ստացած և վերջինիս ուղարկած կարճ հաղորդագրությունները: Բացի այդ, չի հարցաքննել Վարդենիս քաղաքի բնակիչ Պ. Ասատրյանին՝ պարզելու համար, թե վերջինս ինչ առնչություն ունի դեպքի հետ և ում կողմից է շահագործվել նրա անվամբ գրանցված՝ 098-81-52-11 բջջային հեռախոսահամարը, որից Կ. Վլասյանը զանգահարել է Լ.Քաղքցյանին:

Ս.Նավասարդյանը բացատրություն է տվել, որ Լ.Քաղքցյանի կողմից շահագործված հեռախոսահամաները պարզվել են գործով տուժողներ՝ Լ. Քաղքցյանի մոր և քրոջ ցուցմունքներով: Լ.Քաղքցյանի և Կարեն Վլասյանի հեռախոսահամարների զանգերի վերծանումները և զանգերը սպասարկած կայանների տեղակայման հասցեները ստանալու վերաբերյալ միջնորդությունը պլանավորել է դատարան ներկայացնել ավելի ուշ: Լ.Քաղքցյանի բջջային հեռախոսը չի զննել, քանի որ նա այն չի ներկայացրել, իսկ առանց նրա համաձայնության հեռախոսի բովանդակությունը զննելով կխախտեր անձնական կյանքի անձեռնմխելիության սկզբունքը: Հայտնել է նաև,որ պլանավորված քննության տակտիկայից ելնելով նպատակահարմար չի գտել Պ.Ասատրյանին հարցաքննել նախքան Կ.Վլասյանին, քանի որ Պ.Ասատրյանի հարցաքննության ժամանակ, վերջինս, ինչ-որ չափով կտեղեկանար գործի հանգամանքներից, ինչը կարող էր խանգարել գործի հետագա քնությանը:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով քննիչի բացատրությունները և ուսումնասիրելով նյութերը գտնում է,որ քննիչը քննչական գործողություններ կատարելու ակնհայտ փաստական հանգամանքների առկայության դեպքում՝ շուրջ 2.5 ամսվա ընթացքում միջոցներ չի ձեռնարկել Լ.Քաղքցյանի և Կարեն Վլասյանի օգտագործած բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումները, դրանք սպասարկած ալեհավաք կայանների հասցեները ստանալու ուղղությամբ, ինչը կարող էր նպաստել

հանցագործության իրական հանգամանքների բացահայտմանը: Նախաքննության ընթացքում որևէ միջոց չի ձեռնարկել գործով մեղադրյալ Լ.Քաղքցյանի բջջային հեռախոսն առգրավելու և զննելու ուղղությամբ՝ վերջինիս քրոջ՝ Ն.Քաղքցյանի հայտնած տեղեկությունները հաստատելու կամ հերքելու համար: Բացի այդ, Վարդենիս քաղաքի բնակիչ Պ. Ասատրյանին հայտնաբերելու և հարցաքննելու ուղղությամբ միջոցներ չի ձեռնարկել: Քննիչի կողմից այլ ուղղությամբ նույնպես փաստացի քննություն չի կատարվել:

Հանձնաժողովը գտավ, որ նշված դրվագներով քննիչի արարքներում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

3. ԻԻՀ քաղաքացի Ֆ.Մովիավեդիրոդին պատկանող իրերը և դրամը գողանալու դեպքի առթիվ քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելուց հետո, քրեական գործը վարչական շրջանների դատախազի պաշտոնակատարի պահանջով դատախազություն չի ուղարկել՝ պլանավորված քննչական գործողություններ կատարելու պատճառաբանությամբ: Սակայն այդ ընթացքում որևէ քննչական և այլ դատավարական գործողություններ չի կատարել, միայն նախաքննության ժամկետը լրանալու վերջին օրը հարցաքննել է երկու անձի և այդուհանդերձ միջնորդություն է ներկայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ:

Ս.Նավասարդյանը բացատրություն է տվել, որ քրեական գործը պահանջված ժամկետում վարչական շրջանների դատախազություն չի ուղարկել, քանի որ պլանավորել է կատարել քննչական գործողություններ, մասնավորապես՝ տուժողի հարցաքննություն: Չնայած դրան տուժողի հարցաքննությունը կատարել է ավելի ուշ, քանի որ տեղեկություններ չի ունեցել տուժողի նոր բնակության վայրի վերաբերյալ և չի կարողացել ծանուցագիր ուղարկել: Հանձնարարություն չի տվել հետաքննության մարմնին՝ տուժողին հայտնաբերելու ուղղությամբ, քանի որ, տուժողը հեռախոսով խոստացել է ներկայանալ հարցաքննության, սակայն խոստացած ժամկետում չի ներկայացել:

Կարգապահական հանձնաժողովը լսելով քննիչի բացատրությունները, գտնում է, որ նշված դրվագներով քրեական գործը դատախազի պահանջով դատախազություն չի ուղարկել՝ պլանավորված քննչական գործողություններ կատարելու պառճառաբանությամբ, այնինչ մեկ ամսվա ընթացքում որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություն չի կատարել, միայն նախաքննության ժամկետը լրանալու վերջին օրը հարցաքննել է երկու անձի և այդուհանդերձ միջնորդություն է ներկայացրել նախաքննության ժամկետը երկարացնելու վերաբերյալ: Առանց իրավաչափ նպատակի հսկողության նպատակով պահանջվող քրեական գործը դատախազություն չի ուղարկել, որի հետևանքով մարդը կարող է զրկվել դատախազական հսկողության սահմանադրական երաշխիքից:

Հանձնաժողովը գտավ, որ նշված դրվագով քննիչի արարքներում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ

քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Լ.Քաղքցյանի կողմից գողություն կատարելու դեպքի առթիվ հարուցված թիվ 13804614 քրեական գործի նախաքննության ընթացքում «Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերությունից ստանալով Կարեն Վլասյանի շահագործած բջջային հեռախոսահամարի բաժանորդային տվյալները՝ վերջինիս անհապաղ հայտնաբերելու և հարցաքննելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի կարգով Կարեն Վլասյանին բերման ենթարկելու մասին որոշում չկայացնելու դրվագով ավագ քննիչ Ս.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (7 կողմ, 0 դեմ).

2. Լ.Քաղքցյանի օգտագործած բջջային հեռախոսահամարը չպարզելու, նրա և Կ.Վլասյանի բջջային հեռախոսահամարների մուտքային և ելքային զանգերի վերծանումները չստանալու, Կ.Վլասյանից ստացած և վերջինիս ուղարկած կարճ հաղորդագրությունները չզննելու, Պ.Ասատրյանին հայտնաբերելու և հարցաքննելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու դրվագներով ավագ քննիչ Ս.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (7 կողմ, 0 դեմ).

3. ԻԻՀ քաղաքացի Ֆ.Մովիավեդիրոդին պատկանող իրերը և դրամը գողանալու դեպքի առթիվ հարուցված թիվ 13142714 քրեական գործը դատախազի պաշտոնակատարի կողմից պահանջելու և առանց իրավաչափ նպատակի այն դատախազություն չուղարկելու դրվագով ավագ քննիչ Խ.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, (7 կողմ, 0 դեմ).

4. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

23. հունվարի 2015 թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզի քննչական վարչության ավագ քննիչ Կարեն Ալավերդյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին և քննիչին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Տ

2014թ. դեկտեմբերի 5-ին Սյունիքի մարզի դատախազը քննիչին վարույթից հեռացնելու մասին 03.12.2014թ. որոշման հետ միջնորդություն է ուղարկել նույն մարզի քննչական վարչության պետ Վ.Դաղունցին, որով միջնորդել է ծառայողական քննություն անցկացնել Սյունքի մարզի քննչական վարչության ավագ քննիչ Կ.Ալավերդյանի նկատմամբ՝ որոշման և միջնորդության մեջ նշված հետևյալ պատճառաբանություններով.

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Կարեն Ալավերդյանին վերագրող առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների:

1. Քննիչ Կարեն Ալավերդյանը կասկածյալներին չի ծանոթացրել նախաքննության կատարումը քննչական խմբին հանձնարարելու մասին որոշումը և համապատասխան արձանագրությամբ կասկածյալներին չի պարզաբանել ցանկացած քննիչին բացարկ հայտնելու նրանց իրավունքը:

Քննիչ Կ.Ալավերդյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել, որ անուշադրության հետևանքով թույլ է տվել վերոշարադրյալ դատավարական խախտումը:

Կարգապահական հանձնաժողովը, ուսումնասիրելով նյութերը, պարզեց, որ 13.06.2014թ. ՀՀ ոստիկանության ՔԳՎ Սյունիքի քննչական բաժնի պետ Վ.Դաղունցը քրեական գործով որոշում է կայացրել նախաքննության կատարումը քննչական խմբին հանձնարարելու մասին, որով՝ քննչական խմբի ղեկավար է նշանակվել քննիչ Կ.Ալավերդյանը: Քրեական գործի քննության ընթացքում 11.11.2014թ. քննիչ Կ.Ալավերդյանի որոշմամբ Ա.Գևորգյանի և Ա. Ալավերդյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրություն: Նույն օրը՝ նրանք հարցաքննվել են որպես կասկածյալներ, սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածի պահանջների համաձայն քննիչը կասկածյալներին չի ծանոթացրել որոշմանը և չի պարզաբանել քննիչին բացարկ հայտնելու նրանց իրավունքը (ն.թ.177): Տվյալ դեպքում կասկածյալները զրկվել են բացարկ ներկայացնելու դատավարական իրավունքից: Հանձնաժողովը գտավ, որ նշված դրվագով քննիչ Կ.Ալավերդյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

2.Քննիչ Կ.Ալավերդյանը կասկածյալներ Ա.Գևորգյանին և Ա.Ալավերդյանին համապատասխան արձանագրությամբ չի ծանոթացրել Խ. Առաքելյանի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, որով զրկել է նրանց դրա դեմ միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից:

Քննիչ Կ.Ալավերդյանը բացատրություն է տվել, որ չնայած՝ արձանագրությամբ կասկածյալներին չի ծանոթացրել դատաբժշկական փորձաքննության եզրակացությանը, սակայն բանավոր նրանց տեղեկացրել է դատաբժշկի արած հետևություններին:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով քննիչ Կ. Ալավերդյանին և ուսումնասիրելով նյութերը պարզեց, որ 30.06.2014թ. ստացվել է Խ. Առաքելյանի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, ինչը, սակայն քննիչ Կ.Առաքելյանը ՀՀ քրեական դատավա-

ության օրենսգրքի 247-րդ հոդվածի կարգով՝ տասնօրյա ժամկետում, չի ծանոթացրել կասկածյալներ Ա.Գևորգյանին և Ա.Ալավերդյանին, ապա՝ համապատասխան արձանագրություն չի կազմել, որպիսի գործողություններով զրկել է նրանց եզրակացության դեմ միջնորդություններ ներկայացնելու հնարավորությունից (ն.թ.74-76): Հանձնաժողովը գտնում է, որ նշված դրվագով քննիչ Կ. Ալավերդյանի արարքներում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը:

3.Քննիչ Կ.Ալավերդյանն ազգակցական կապի մեջ է գտնվում քրեական գործով կասկածյալ Ա. Ալավերդյանի հետ, ինչը կասկած է հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ:

Քննիչ Կ. Ալավերդյանը բացատրություն է տվել, որ քրեական գործի քննության ընթացքում պատահաբար տեղեկացել է, որ Ա. Ալավերդյանը հեռավոր ազգական է, ում նախկինում չի ճանաչել: Հարցուփորձ անելով պարզել է, որ հորեղբոր որդիների ծոռներ են: Այս մասին նախնական ուսումնասիրության ընթացքում բացատրություն են տվել նաև կասկածյալ Ա.Ալավերդյանի հորեղբոր՝ Ս.Ալավերդյանի ազգական Գ.Ալավերդյանի, և քննչական վարչության պետ Վ.Դաղուցի բացատրություններով, նաև՝ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետի 2014թ. դեկտեմբերի 13-ի գրությամբ, համաձայն որոնց՝ Կ.Ալավերդյանն ու Ա.Ալավերդյանն ազգակիցներ են՝ հորեղբոր որդիների ծոռներ, նախկինում միմյանց չեն ճանաչել և այդ մասին չեն իմացել:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով բացատրությունները և ուսումնասիրելով նյութերը գտնում է, որ քննիչ Կ.Ալավերդյանը և կասկածյալ Ա. Ալավերդյանը չեն հանդիսանում մինչև 3-րդ աստիճանի կապի մեջ գտնվող ազգակցականներ, հետևապես բացակայում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 90-րդ հոդվածի իմաստով բացարկի հիմքեր: Կարգապահական հանձնաժողովը գտնում է, որ նշված դրվագով բացակայում է քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստը:

4.Քննիչը մարզի դատախազություն չի ուղարկել քրեական գործը՝ քննչական ու այլ դատավարական գործողություններ կատարելու պատճառաբանությամբ: Մինչդեռ, պարզվել է, որ նա այդ ընթացքում ընդամենը հարցում է կատարել «ԴՓՄ Կապան» ՓԲԸ, ուղարկել հարցաքննության հրավիրելու մասին ծանուցագրեր, ոստիկանությանը հանձնարարություն է տվել, իսկ հարցաքննությունները կատարել է միայն 24.11.2014թ.:

Կարգապահական հանձնաժողովը, լսելով քննիչի բացատրությունները, ուսումնասիրելով նշված ժամանակահատվածում կատարված դատավարական գործողությունների պատճեները, գտնում է, որ քննիչին վերագրվող առերևույթ իրավախախտման փաստը բացակայում է: Նշված ժամանակահատվածում քրեական գործով կատարվել են մոտ 19 քննչական և այլ դատավարական գործողություններ, ինչից հետո միայն՝ այն ուղարկվել է մարզի դատախազություն (ն.թ. 77-172): Այսպիսով, քրեական գործն դատախազին անմիջապես չուղարկելը պայմանավորված է եղել դատավարական գործողություններ կատարելու իրավաչափ նպատակով: Հանձնաժողովը գտնում է, որ նշված դրվագով քննիչ Կ. Ալավերդյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

6. Կասկածյալներին նախաքննության կատարումը քննչական խմբին հանձնարարելու մասին որոշումը չծանոթացնելու դրվագով ավագ քննիչ Կ.Ալավերդյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ 7, դեմ 0).

7. Կասկածյալներին համապատասխան արձանագրությամբ Խ.Առաքելյանի դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը չծանոթացնելու դրվագով ավագ քննիչ Կ.Ալավերդյանի առկա են իրավախախտման փաստը և նրա մեղավորությունը (կողմ 7, դեմ 0).

8. Կասկածյալ Ա.Ալավերդյանի հետ ազգակցական կապի մեջ գտնվելու հանգամանքը գործով նրա անկողմնակալության մեջ կասկած հարուցել դրվագով ավագ քննիչ Կ.Ալավերդյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ 7, դեմ 0).

9. Առանց հիմնավոր պատճառի քրեական գործը մարզի դատախազություն չուղարկելու դրվագով ավագ քննիչ Կ.Ալավերդյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ 7, դեմ 0):

10. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

11.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի բացակայության մասին

6 փետրվարի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ Կամո Շառոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ Ա Ր Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Ա.Չիչոյանի 29.12.2014թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ նույն վարչական շրջանի քննչական բաժնի պետի պաշտոնակատար Կամո

Շառոյանն առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է բաժնի պետի տեղակալին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Քննչական բաժնի պետի պաշտոնակատար Կ.Շառոյանը քրեական գործի նյութերը չուսումնասիրելու, իր հանձնարարությունների կատարմանը չհետևելու պատճառով չի պարզել, որ քննիչը քրեական գործն վարույթ ընդունելու որոշում չի կայացրել:

Վերը նշված խախտման վերաբերյալ Կ.Շառոյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին,որ երբ ավագ քննիչ Տ.Շոխոյանը դատախազի որոշմամբ հեռացվել է քրեական գործով դատավարությանը մասնակցելուց, քննչական բաժնի պետի ցուցումով քրեական գործը զեկուցվել է նրան, որից հետո նախաքննության հետագա կատարումը հանձնարարվել է ավագ քննիչ Գ.Թառոյանին: Վերջինս որոշում է կայացրել քրեական գործը վարույթ ընդունելու մասին, նշված որոշումը ինքը տեսել է քրեական գործն ուսումնասիրելիս: Հիշյալ գործը 24.12.2014թ. վարչական շրջանի դատախազություն ուսումնասիրության նպատակով ուղարկելիս ավագ քննիչ Գ.Թառոյանն այն կարելուց և համարակալելուց տեխնիկական վրիպման արդյունքում մոռացել է վարույթ ընդունելու մասին որոշումը կարել քրեական գործի մեջ, հետագայում իր աշխատասեղանի վրա նկատելով նշված որոշումը՝ ուղեկցական գրությամբ այն ուղարկել է վարչական շրջանի դատախազություն: Գ.Թառոյանի կողմից թիվ 11814114 գործով նախաքննություն իրականացնելու մասին քաջատեղյակ է եղել հսկող դատախազը, քանի որ գործը քննիչի և իր կողմից մի քանի անգամ քննարկվել է նրա մոտ, տեղեկացված է եղել, որ գործով անցնող անձանց չեն կարողանում հայտնաբերել և ներկայացնել քննության: Բացի այդ, նույն դատախազը 2 անգամ բավարարել է քննիչ Գ.Թառոյանի կողմից նախաքննության ժամկետ երկարացնելու մասին միջնորդությունները:: Ինչ վերաբերվում է ավագ քննիչ Տ.Շոխոյանին դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին դատախազի որոշմամբ վեր հանված, քննիչի կողմից չկատարված քննչական և դատավարական գործողությունները եղել է նաև ցուցում Գ.Թառոյանի համար, ապա նշել է, որ դատախազի կողմից քրեական գործով ցուցում տալու կարգը հստակ սահմանված է ՀՀ քր. դատ. օր-ի 53-րդ հոդվածով, իսկ քննիչը ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ հոդվածով՝ ինքնուրույն է պլանավորել իր գործողությունները:

Ինչ վերաբերում է իր կողմից քրեական գործի նյութերը երբևիցե չուսումնասիրելուն և ավագ քննիչ Գ.Թառոյանին տրված հանձնարարությունների և ցուցումների կատարմանը չհետևելուն, նշել է, որ դա չի համապատասխանում իրականությանը: Քննչական բաժնի պետի պաշտոնակատար աշխատած ժամանակահատվածում, ինչպես նշված քրեական գործն, այնպես էլ քննչական բաժնի վարույթում եղած շուրջ 300 քրեական գործեր և նյութեր, գտնվել է իր հսկողության ներքո, անձամբ հետևել է քննիչներին տրված հանձնարարությունների և ցուցումների կատարմանը: Քննիչ Գ.Թառոյանի հետ միասին մի քանի անգամ հսկող

դատախազի մոտ մասնակցել է նշված գործով քննարկումներին, քննիչին տվել գրավոր ցուցումներ, կատարել մակագրություններ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Կ. Շառոյանի արարքներում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ կարգապահական հանձնաժողովի 06.02.2015թ.-ի որոշմամբ հաստատվել է, որ քննարկվող քրեական գործով ավագ քննիչ Գ. Թառոյանի կողմից վարույթ ընդունելու մասին որոշում չկայացնելու դրվագով իրավախախտման փաստի բացակայությունը:

2. Քրեական գործը դատախազություն չուղարկելով քննչական բաժնի պետը չի կատարել դատախազի օրինական ցուցումները՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 4-րդ մասը:

Հիշյալ առերևույթ խախտման վերաբերյալ Կ.Շառոյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին է, որ 25.11.2014թ. նշանակվել է Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պետի պաշտոնակատար: 18.11.2014թ. և 18.12.2014թ. համապատասխան գրություններով վարչական շրջանի դատախազությունից պահանջվել է թիվ 11814114 քրեական գործը և 24.12.2014թ. ուղեկցական գրությամբ այն ուղարկվել է վարչական շրջանի դատախազություն: 19.11.2014թ. դատախազությունից ստանալով ավագ քննիչ Գ.Թառոյանի կողմից ժամկետ երկարացնելու միջնորդությունը բավարարելու մասին որոշման ուղեկցական գրությունը, որով միաժամանակ պահանջվում էր ստուգման նպատակով քրեական գործը ներկայացնել դատախազություն, նշված ուղեկցական գրության վրա մակագրել է «Գ.Թառոյանին. քրեական գործը մինչև 21.11.2014թ. ուղարկել վարչական շրջանի դատախազություն»: Հաջորդ օրը քննիչից տեղեկացել է, որ նա գործը զեկուցել է հսկող դատախազին և այլևս կարիք չկա այն ուղեկցական գրությամբ դատախազություն ուղարկելու: 18.12.2014թ. վարչական շրջանի դատախազությունից ստացված նույնաբովանդակ գրության վրա մակագրել է «Գ.Թառոյանին. քրեական գործը ներկայացնել զեկուցման»: Գ.Թառոյանի կողմից գործն իրեն զեկուցելուց հետո բանավոր հանձնարարել է նրան այն ուղարկել դատախազություն:

23.12.2014թ. դատախազությունից ստանալով քրեական գործն ուսումնասիրության նպատակով ներկայացնելու գրությունը՝ հաջորդ օրը կից գրությամբ ուղարկվել է վարչական շրջանի դատախազություն:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով քննչական բաժնի պետի պաշտոնակատար Կ. Շառոյանի արարքներում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածում հստակ տարանջատված են դատախազի կողմից ստուգման համար հետաքննության մարմնից, քննիչից նյութեր, փաստաթղթեր, քրեական գործեր պահանջելու (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասին 2-րդ կետ) և ցուցում տալու լիազորությունները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասին 6-րդ կետ): ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 4-րդ մասում կարգավորվում է քննչական բաժնի պետին հասցեագրված դատախազի ցուցումների պարտադիրությունը: Այս իմաստով՝ քրեական գործ պահանջելը չի կարող որակվել

դատախազական ցուցում, իսկ քրեական գործը չուղարկելը չի կարող դիտարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 193-րդ հոդվածի 4-րդ մասի համատեքստում:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասին 2-րդ կետով դատախազը քրեական գործը պահանջում է ոչ թե քննչական բաժնի պետից, այլ հետաքննության մարմնից, քննիչից, ուստի քրեական գործը դատախազին չուղարկելու առերևույթ խախտման սուբյեկտը ոչ թե քննչական բաժնի պետն է, այլ վարույթն իրականացնող քննիչը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գործը չուսումնասիրելու և իր հանձնարարությունների կատարմանը չհետևելու, քննիչի կողմից քրեական գործը վարույթ ընդունելու որոշման բացակայության հանգամանքը ժամանակին չպարզելու դրվագով քննչական բաժնի պետի պաշտոնակատար Կ. Շառոյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0).

2. Քրեական գործը դատախազություն ուղարկելու մասին դատախազի պահանջը չկատարելու դրվագով քննչական բաժնի պետի պաշտոնակատար Կ. Շառոյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0).

3. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

6 փետրվարի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գարիկ Թառոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

ՊԱՐԶԵՑ

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ Ա.Չիչոյանի 29.12.2014թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ նույն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գարիկ Թառոյանը, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է քննիչ Գ. Թառոյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Ավագ քննիչ Գ.Թառոյանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 3-րդ մասի առերևույթ խախտում՝ մինչև 29.12.2014թ. քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում չի կայացրել:

Վերը նշված խախտման վերաբերյալ Գ. Թառոյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն է տվել այն մասին, որ իր կողմից 24.10.2014թ. որոշում է կայացվել քրեական գործը վարույթ ընդունելու վերաբերյալ, այդ մասին քաջատեղյակ է եղել նաև դատավարական հսկողություն իրականացնող Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Ա.Մարգարյանը, քանի որ բազմիցս հիշյալ գործն անձամբ զեկուցել է նրան, եղել են քննարկումներ՝ գործով անցնող անձանց հայտնաբերելու և հարցաքննության ներկայացնելու նպատակով և հսկող դատախազը 2 անգամ բավարարել է իր կողմից նախաքննության ժամկետը երկարացնելու միջնորդությունները:

23.12.2014թ., ստանալով դատախազության գրությունը, որով պահանջվում էր քրեական գործը համարակալված և կարված վիճակում ուղարկել իրենց, թույլ է տվել տեխնիկական վրիպակ և մոռացության արդյունքում քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը և հիշյալ գրությունը չի կցել քրեական գործի նյութերին: Հետագայում իր աշխատասեղանի վրա նկատելով նշված որոշումը, կից գրությամբ ուղարկել է վարչական շրջանի դատախազություն, իսկ գրությունը պահել վարույթում՝ հետագայում գործին կցելու նպատակով: Նշել է նաև, որ իր կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 3-րդ մասի կոպիտ խախտում թույլ չի տրվել՝ օրենքի նշված պահանջը վերաբերում է քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին միասնական որոշմանը, իսկ քրեական գործը վարույթի տակ ընդունելու որոշումը դատախազին ուղարկելու ընթացակարգ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախատեսված չէ:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ավագ քննիչ Գ. Թառոյանի արարքում բացակայում է խախտման փաստը, հետևյալ պատճառաբանությամբ: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե քրեական գործ հարուցել է քննիչը կամ հետաքննության մարմինը, և նրանց կողմից ընդունվել է իրենց վարույթ, ապա քրեական գործ հարուցելու և այն իրենց վարույթն ընդունելու մասին կազմվում է միասնական որոշում: Այս դատավարական փաստաթղթի պատճեն անմիջապես, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, ուղարկվում է դատախազին: Նշված հոդվածը կարգավորում

է քրեական գործ հարուցելու և այն վարույթ ընդունելու միասնական որոշումը դատախազին ուղարկելու պարտականության մասին, մինչդեռ, սույն դեպքում քննիչը կայացրել է միայն վարույթ ընդունելու մասին որոշում, որը դատախազին ուղարկելու վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված չէ:

2. Ավագ քննիչ Գ. Թառոյանը թույլ է տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի առերևույթ խախտում՝ քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում քրեական գործին չի կցել:

Կարգապահական հանձնաժողովը, ի պաշտոնե պարզել է, որ ավագ քննիչ Թառոյանը քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուց հետո է կցել քրեական գործին:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Գ.Թառոյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը, քանի որ Գ. Թառոյանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի պահանջը, այն քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը օրենքով սահմանված կարգով անմիջապես չի կցել քրեական գործի նյութերին և չի համարակալել:

3. Դատախազը 18.11.2014թ. պահանջել է սեղմ ժամկետում ուսումնասիրության նպատակով քրեական գործը կարված և համարակալված վիճակում ուղարկել վարչական շրջանի դատախազություն: 19.11.2014թ. քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Շառոյանը նշված ուղեկցական գրության վրա կատարել է մակագրություն «Գ.Թառոյանին. քրեական գործը մինչև 21.11.2014թ. ուղարկել վարչական շրջանի դատախազություն», սակայն քննիչը քրեական գործը մինչև 21.11.2014թ. չի ուղարկել դատախազություն:

Հիշյալ առերևույթ խախտման վերաբերյալ Գ. Թառոյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ գրությունը ստանալուց հետո անձամբ քրեական գործը ներկայացրել է հսկող դատախազ Ա. Մարգարյանին, վերջինիս հետ քննարկել են գործով կատարված աշխատանքները, համաձայնության են եկել կրկին ոստիկանության բաժնին հանձնարարություն տալու վերաբերյալ, որի պատճառով քրեական գործն այլևս գրությամբ դատախազություն չի ուղարկվել:

Քննչական բաժնի պետի տեղակալը բացատրությունում նույնպես նշեց, որ երկու անգամ քրեական գործը ներկայացվել է հսկող դատախազին, իսկ երրորդ անգամ ինքն անձամբ է մասնակցել քրեական գործի քննարկմանը:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Գ.Թառոյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը, քանի որ Գ.Թառոյանը չի կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 2 կետի պահանջը՝ դատախազը քրեական գործը պահանջել է, սակայն քննիչը, ով իրավաչափ նպատակի բացակայության պայմաններում, շուրջ մեկ ամիս քրեական գործը չի ուղարկել դատախազին: Քննիչի կողմից քրեական գործը դատախազին փաստացի ներկայացնելն ինքնին չի վերացնում քրեական գործն օրենքով սահմանված կարգով ուղեկցական գրությամբ դատախազություն ուղարկելու պարտականությունը:

4. Գ. Թառոյանը քրեական գործի նյութերով պարզելով որ, Մ.Սարգսյանը և Ա.Ազիզխանյանը փաստացի բնակվում են Երևան քաղաքի Վարդաշեն 6 փողոցի 66 շենքի թիվ 207 բնակարանում, միայն 27 օր անց է որոշումներ կայացրել Մ.Սարգսյանին Վարդաշեն 6 փողոցի 66 շենքի թիվ 207 բնակարանից, իսկ Ա.Ազիզխանյանը Երևան քաղաքի Նոր Խարբերդ 16 փողոցի 69/11 տանից քննչական բաժին բերման թարկելու մասին, մի դեպքում նշելով սխալ շենքի հասցե, մյուս դեպքում՝ ընդհանրապես այլ թաղամաս և հասցե: Քննիչը տեղյակ լինելով, որ Վարդաշեն թաղամասը սպասարկվում է ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից, բերման ենթարկելու մասին որոշումների կատարումը հանձնարարել է ոստիկանության Շենգավիթի բաժնին:

Հիշյալ խախտման վերաբերյալ Գ. Թառոյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ պլանավորված քննության տակտիկայից ելնելով անհրաժեշտ է եղել հարցաքննել Մ.Սարգսյանին, Ն.Սարգսյանին և Ա.Ազիզխանյանին, որի հարցաքննությունից էր կախված քրեական գործի հետագա ընթացքը: Նախաքննության ժամկետ երկարացնելուց հետո հանձնարարություն է տվել ոստիկանության Շենգավիթ բաժնին՝ վերոհիշյալ անձանց հայտնաբերելու և քննության ներկայացնելու համար, սակայն ձեռնարկված միջոցառումները դրական արդյունք չեն տվել: Բացի այդ, բազմիցս փորձել է հեռախոսով կապ հաստատել նշված անձանց հետ, սակայն հեռախոսահամարները անհասանելի են եղել: Նոյեմբեր ամսվա վերջին կրկին զանգահարել է Ա.Ազիզյանի հեռախոսահամարին, վերջինս պատասխանել է իր զանգին և հայտնել, որ այդ պահին գտնվում են Եղեգնաձորում՝ ընկույզ հավաքելու և վերադառնալու են դեկտեմբերի 13-ին, խոստանալով անհապաղ ներկայանալ քննչական բաժին քննության: Դեկտեմբերի 13 կրկին փորձել է զանգահարել Ա.Ազիզխանյանին և մյուսներին, սակայն հեռախոսահամարները եղել են անհասանելի, որից հետո, հաջորդ օրը որոշում է կայացրել նրանց բերման ենթարկելու մասին: Այդ պատճառով էլ 27 օր գործողություն չի կատարել: Ինչ վերաբերվում է Մ.Սարգսյանի և Ա.Ազիզխանյանի բնակության հասցեները բերման ենթարկելու մասին որոշման մեջ սխալ նշելուն, ապա դա եղել է իր կողմից թույլ տրված տեխնիկական վրիպակ՝ Վարդաշեն 6 փողոց 66ա շենքի 207 բնակարանի փոխարեն նշել է 6-րդ փողոց 66 շենքի 207 բնակարան, իսկ Ա.Ազիզխանյանի բնակության վայրը նշել է Նոր Խարբերդ 16-րդ փողոց 69/11 տուն, քանի որ Ա.Ազիզխանյանը նախկինում իր վարույթում քննվող մեկ այլ քրեական գործով անցել է որպես վկա, որի ընթացքում Երեխաների հետ բնակվել է նշված հասցեում, այդ իսկ պատճառով մտածել է, որ նա կրկին բնակվում է այդ տանը:

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների բնակիչներ Մ.Սարգսյանին և Ա.Ազիզխանյանին բերման ենթարկելու վերաբերյալ վերոհիշյալ որոշումների կատարումը ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնին հանձնարարելու դրվագով Գ.Թառոյանը բացատրություն տվեց, որ ինքը հաշվի է առել այն հանգամանքը, որ նշված անձինք հաճախակի են գտնվում Շենգավիթ վարչական շրջանում, ոստիկանության Շենգավիթի բաժնի աշխատակիցները ճանաչում են նրանց, քանի որ վերջիններիս վերաբերյալ մի քանի նյութ են նախապատրաստել և մերժել, բացի այդ, ՀՀ ոստիկանությունը

միասնական համակարգ է, ուստի որոշման կատարումը հանձնարարել է ոստիկանության Շենգավիթի, այլ ոչ թե Էրեբունու բաժնին:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ բերման ենթարկելու որոշումներում Մ.Սարգսյանի և Ա.Ազիզխանյանի փաստացի բնակության հասցեները սխալ նշելու և ՀՀ ոստիկանության ոչ պատշաճ տարածքային մարմնին հասցեագրելու դրվագով Գ. Թառոյանի արարքներում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ դրանք «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի իմաստով չեն համարվում կոպիտ խախտում:

5. Քննիչի կողմից Մ.Սարգսյանին Ա Ա.Ազիզխանյանին հայտնաբերելու և նրանց մասնակցությամբ քննություն կատարելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն չցուցաբերելը:

Կարգապահական հանձնաժողովը, ի պաշտոնե պարզել է, որ ավագ քննիչ Գ. Թառոյանը Մ.Սարգսյանին և Ա.Ազիզխանյանին հայտնաբերելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն չի ցուցաբերել:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Գ.Թառոյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը, քանի որ որևէ իրավաչափ նպատակի բացակայության պայմաններում՝ շուրջ 27 որևէ գործողություն չի կատարել, մասնավորապես պարզելով, որ բերման ենթարկելու մասին որոշումը ուղարկել է ՀՀ ոստիկանության ոչ պատշաճ տարածքային մարմին, դրանից հետո որոշումը կատարելու նպատակով այն չի ուղարկել իրավասու տարածքային մարմին, բերման ենթարկելու մասին որոշման մեջ չի ուղղել թույլ տված վրիպակը, չի փորձել անչափահաս տուժողի միջոցով պարզել Մ. Սարգսյանի և Ա. Ազիզխանյանի գտնվելու վայրը:

6. Դատավարական հսկողություն իրականացնող դատախազի կողմից դեռևս 24.10.2014թ. ավագ քննիչ Տ.Շոխոյանին քրեական գործով դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին որոշմամբ վեր հանված, վերջինիս կողմից չկատարված քննչական և դատավարական գործողությունները ավագ քննիչ Գ.Թառոյանը չի դիտել որպես ցուցում և չի կատարել որոշմամբ վեր հանված նախորդ քննիչի կողմից չկատարված անհրաժեշտ քննչական գործողություններ, որոնցով հնարավոր կլիներ պարզելու գործով անցնող անձանց անձնագրային տվյալները, հաշվառման հասցեները և նրանց ներկայացնել քննության:

Գ. Թառոյանը Կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին որ դատախազի կողմից նշված որոշման մեջ վեր հանված՝ նախորդ քննիչի կողմից չկատարված քննչական և դատավարական գործողությունները իր կողմից չէր կարող դիտվել որպես քրեական գործով ցուցում, քանի որ ոչ տվյալ որոշման, ոչ էլ ուղեկցական գրության մեջ այդ մասին որևէ նշում չի եղել, դատախազի կողմից ցուցում տալու կարգ հստակ սահմանված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53 հոդվածի 6-րդ կետով և ինքը ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածով ինքնուրույն պլանավորել է աշխատանքները, հետևաբար քննիչ Տ. Շոխոյանին քրեական գործով դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին դատախազի որոշման մեջ նշված՝ վերջինիս կողմից

չկատարված քննչական կամ դատավարական գործողություններն իր կողմից չէր կարող դիտվել որպես քրեական գործով ցուցում:

Կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ նշված դրվագով Գ. Թառոյանի արարքներում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ դատախազի ցուցումը քննիչին վարույթից հեռացնելու մասին որոշումը տարաբնույթ դատավարական փաստաթղթեր են: Դատախազը, վարույթից հեռացնելու մասին որոշմամբ ներկայացնում է քննիչի կողմից թույլ տրված խախտումները, այս որոշումը չի կարող պարունակել ցուցում և չի կարող փոխարինել ցուցումին: Քննիչին վարույթից հեռացնելու մասին որոշումը որպես ցուցում դիտարկելը քննիչին զրկում է այն բողոքարկելու իրավունքից: Նման իրավիճակում դատախազը, որպես առանձին դատավարական փաստաթուղթ, պետք է կազմի ցուցում: Ուստի քննիչին վարույթից հեռացնելու մասին որոշումը որպես ցուցում չդիտելը դատավարական գործողություններ չկատարելը չի կարող դիտարկվել որպես ցուցում չկատարել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում չկայացնելու դրվագով ավագ քննիչ Գ. Թառոյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

2. Գ. Թառոյանի կողմից քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը սահմանված կարգով քրեական գործի նյութերին չկցելու և չհամարակալելու դրվագով Գ. Թառոյանի արարքում առկա են խախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

3. Դատախազի գրավոր պահանջով քրեական գործը վարչական շրջանի դատախազություն օրենքով սահմանված կարգով չուղարկելու դրվագով ավագ քննիչ Գ.Թառոյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

5. Մ.Սարգսյանին և Ա.Ազիզխանյանին բերման ենթարկելու մասին որոշումների մեջ սխալ հասցեներ նշելու և ՀՀ ոստիկանության ոչ պատշաճ տարածքային ստորաբաժանում ուղարկելու դրվագով ավագ քննիչ Գ.Թառոյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

6. Մ.Սարգսյանին և Ա.Ազիզխանյանին հայտնաբերելու և նրանց մասնակցությամբ քննություն կատարելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն չցուցաբերելու դրվագով ավագ քննիչ Գ.Թառոյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

7. Դատավարական հսկողություն իրականացնող դատախազի կողմից ավագ քննիչ Տ.Շոխոյանին քրեական գործով դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին որոշումը որպես ցուցում չընդունելու և մատնանշված դատավարական գործողությունները չկատարելու դրվագով ավագ քննիչ Գ.Թառոյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 7, դեմ՝ 0):

8. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

20 փետրվարի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Խաչատուր Նավասարդյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

Պ ԱՐ Զ Ե Ց

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ Վ. Հարությունյանի 21.01.2015թ. թիվ 16120914 քրեական գործով օրենքի խախտումներ թույլ տալու համար նույն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ՛,քննիչ Խաչատուր Նավասարդյանի նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու մասին միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում Խ.Նավասարդյանն իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Խ.Նավասարդյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագի.

20.11.2014թ. որոշում է կայացրել քրեական գործով նախաքննության ժամկետը մեկ ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին, պատճառաբանելով, որ անհրաժեշտ է զննել «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ից ստացված 055-09-49-09 բջջային հեռախոսահամարի մուտքային և ելքային հեռախոսազանգերի վերծանումները, կատարել դրանից բխող քննչական գործողություններ, պարզել մեղադրյալ Վ.Լոռեցյանի հնարավոր հանցակիցներին, հարցաքննել և իրավական գնահատական տալ նրանց արարքներին, սակայն որևէ քննչական կամ դատավարական գործողություն չկատարելով 20.12.2014թ. կրկին նույն պատճառաբանությամբ որոշում է կայացրել քրեական գործով նախաքննության

ժամկետը մեկ ամսով երկարացնելու միջնորդություն հարուցելու մասին և դարձյալ մինչև 2015թ. հունվարի 16-ը որևէ քննչական գործողություն չի կատարել:

Ըստ Խ.Նավասարդյանի բացատրության քրեական գործով էական նշանակություն ունեցող քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտություն չի եղել և քրեական գործը զեկուցվել է վարչական շրջանի դատախազություն՝ վերջնական ընթացքը լուծելու համար, սակայն դատախազությունից հանձնարարել են շարունակել նախաքննությունը:

Նշված դրվագով հանձնաժողովը միաձայն որոշեց, որ 1.5 ամսվա ընթացքում որևէ քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելու, մասնավորապես՝ հեռախոսազանգերի վերծանումները չզննելու, դրանից բխող քննչական գործողություններ չկատարելու, մեղադրյալ Վ.Լոռեցյանի հնարավոր հանցակիցներին չհայտնաբերելու դրվագով Խ.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, 73-75-րդ կետերով և քվեարկության արդյունքներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 16120914 քրեական գործով 1.5 ամիս քննչական և այլ դատավարական գործողություններ չկատարելու՝ հեռախոսազանգերի վերծանումները չզննելու, դրանից բխող քննչական գործողություններ չկատարելու, մեղադրյալ Վ.Լոռեցյանի հնարավոր հանցակիցներին չհայտնաբերելու դրվագով ավագ քննիչ Խ.Նավասարդյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը (6 կողմ, 0 դեմ):

2. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

կարգապահական խախտման փաստի առկայության և կատարված խախտման մեջ քննչական կոմիտեի ծառայողի մեղավորության մասին

13 մարտի 2015 թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ներսես Մուրադյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի ընթացքում, լսելով զեկուցողին, հետազոտելով ՀՀ քննչական կոմիտեի ներքին անվտանգութ-

յան վարչությունում իրականացված նախնական ուսումնասիրության նյութերը, կազմված եզրակացությունը.

ՊԱՐԶԵՑ

ՀՀ դատախազության Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ Ա.Մարգարյանի 13.02.2015թ. միջնորդության առթիվ կատարված ծառայողական քննությամբ պարզվել է, որ նույն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ներսես Մուրադյանը, վարույթում քննված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում, իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նորմերը:

Կարգապահական հանձնաժողովը քննարկել է ավագ քննիչ Ն.Մուրադյանին վերագրվող օրենքի առերևույթ խախտումներն ըստ ստորև նշված դրվագների.

1. Շուրջ 45 օր տևած նախաքննության ընթացքում կատարել է խիստ թերի և մակերեսորեն քննություն՝ հարցաքննելով ընդամենը երկու անձի՝ տուժող Ա.Հովհաննիսյանին և վկա Ս.Ավագյանին, որոնց ցուցմունքներում առկա հակասությունների պայմաններում չի կատարել առերեսում՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 217-րդ հոդվածի պահանջները:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ քրեական գործի նախաքննության ընթացքում պլանավորել է հրավիրել և հարցաքննել նաև այլ անձանց, ովքեր կարող էին դեպքի մասին տեղեկություններ ունենային, սակայն չի հասցրել՝ այլ քրեական գործերով ծանրաբեռնված լինելու պատճառաբանությամբ:

Վերը նշված դրվագով կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ավագ քննիչ Ն.Մուրադյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը, քանի որ քննչական գործողություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում, չի կատարվել դրանք, ինչը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի:

2. Չի զննվել և քննության առարկա չի դարձվել. տուժող Ա.Հովհաննիսյանի «Մալաթիա» ԲԿ ընդունվելու տեսագրությունը, դեպքի վայրից շուրջ 100 մետր հեռավորության վրա գտնվող սուպերմարկետի տեսախցիկների առգրավված տեսագրությունները, «Մալաթիա» բժշկական կենտրոնից ստացված տուժողի հագուստները:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում տեսագրությունները դիտել է, սակայն զննության արձանագրություն չի կազմել, որը պլանավորել է կատարել հետագայում, սակայն չի կատարել:

Հիշյալ դրվագով կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ ավագ քննիչ Ն.Մուրադյանի արարքում առկա են իրավախախտման փաստը և մեղավորությունը՝ քննիչի կողմից չի պահպանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 3-րդ մասի և 217-րդ հոդվածի պահանջները, քանի որ վերոհիշյալ քննչական գործողությունները կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում, զննության արձանագրություններ չի կազմել, ինչը քրեական գործով հրատապ էր և ուշացումը ողջամտորեն կարող էր հանգեցնել գործի համար կարևոր նշանակություն ունեցող ապացույցի կորստի:

3.Չի կատարվել դատաբժիշկ փորձագետի՝ տուժողին և նրա հիվանդության պատմագիրը ներկայացնելու վերաբերյալ պահանջը. որի հետևանքով ձգձգվել է դատաբժշկական փորձաքննության կատարումը:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ նախաքննության ընթացքում նշանակել է ստացիոնար դատաբժշկական փորձաքննություն, որպեսզի դատաբժիշկ փորձագետը այցելի բժշկական կենտրոն և հիվանդանոցային պայմաններում զննի հիվանդին և հիվանդության պատմագիրը: Պլանավորել է տուժողին ծանոթացնել 02.02.2015թ, ստացված դատաբժշկական միջանկյալ եզրակացությանը, որից հետո տուժողին և հիվանդության պատմագիրը ներկայացնել, սակայն չի հասցրել, քանի որ 10.02.2015թ. հեռացվել է քրեական դատավարությանը մասնակցելուց:

Կարգապահական հանձնաժողովը հիշյալ դրվագով որոշեց, որ ավագ քննիչ Ն. Մուրադյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու մասին որոշումը քննիչի կողմից կայացվել է դեպքի օրը՝ 25.12.2014թ. և նույն օրը ելք է կատարվել քննչական բաժնից: Դատաբժիշկ փորձագետը բժշկական կենտրոն այցելել է ավելի ուշ, երբ տուժողը արդեն դուրս գրված է եղել բժշկական կենտրոնից, իսկ քննիչը ծանրաբեռնված լինելով վարույթում քննվող 27 այլ քրեական գործերի նախաքննությամբ չի հասցրել կատարել փորձագետի պահանջը:

4.Քրեական գործի նյութերում առկա է փորձաքննություն նշանակելու մասին որոշումները տուժողին ծանոթացնելու արձանագրությունների երկու դատարկ ձևաթուղթ, որոնցում լրացված են միայն ծանոթացողի ստորագրությունը և ազգանունը:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, ձևաթղթերը մոռացել է լրացնել և այդպես մնացել են քրեական գործի նյութերում:

Նշված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ Ն.Մուրադյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, նկատի ունենալով, որ քննիչը փաստացի չի ծանոթացրել փորձաքննություն նշանակելու մասին որոշման հետ, ծանոթացման արձանագրությունը կազմվել է ձևականորեն, որի արդյունքում անձը զրկվել է փորձագետին նոր հարցեր ներկայացնելու դատավարական իրավունքից:

5.ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնին տրված բազմաթիվ հանձնարարություններում որևէ նշում չկա հանցանք կատարած անձի ինքնությունը պարզելու և նախաքննական մարմնին ներկայացնելու վերաբերյալ:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ տեխնիկական վրիպման արդյունք է:

Նշված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ Ն.Մուրադյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ արդեն իսկ հետաքննության մարմնից 27.12.2014թ. ստացված գրության համաձայն պարզվել է, որ առերևույթ հանցագործությունը կատարել է Ս.Ավագյանը:

6.Փաստացի կասկածյալի կարգավիճակում գտնվող Ս.Ավագյանը հարցաքննվել է վկայի կարգավիճակով, նախազգուշացված լինելով սուտ ցուցմունք տալու և ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ իր կողմից որևէ քրեադատավարական խախտում թույլ չի տրվել, Ս.Ավագյանին պարզաբանել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածով նախատեսված իրավունքները և պարտականությունները:

Նշված դրվագով հանձնաժողովը, նկատի ունենալով, որ մինչդատական վարույթն իրականացնող մարմինը, տեղեկություններ ունենալով, որ Ա.Հովհաննիսյանին մարմնական վնասվածք է պատճառել Ս.Ավագյանը, վերջինիս քրեական գործի վարույթին ներգրավել և հարցաքննել է որպես վկա, նախազգուշացվելով ակնհայտ սուտ ցուցմունք տալու և ցուցմունք տալուց հրաժարվելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին և հարցաքննության ընթացքում առաջադրել է հանցագործության կատարման մեջ Ս.Ավագյանին մերկացնող հարցեր՝ այսինքն Ս.Ավագյանը փաստացի եղել է կասկածյալ և պետք է օգտվեր այդ կարգավիճակից բխող իրավունքներից: (Հիմք ՀՀ վճռաբեկ դատարանի ՀՅՔՐԴ 0153/01/08 նախադեպային որոշում): Հաշվի առնելով քննարկվող հարցի միասնական կիրառման պրակտիկայի բացակայությունը և առկա անորոշությունը, կարգապահական հանձնաժողովը որոշեց, որ Ն.Մուրադյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը:

7.Խուզարկության և վերծանումների թույլտվություն ստանալու միջնորդություններ հարուցելու մասին որոշումները կատարվել են ուշացումով, դեպքից՝ համապատասխանաբար 18 և 27 օր անց:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ աշխատանքային առաջին օրը՝ 2015թ. հունվարի 12-ին որոշում է կայացրել խուզարկություն կատարելու միջնորդություն հարուցելու մասին, իսկ վերծանումներ ստանալու միջնորդություն հարուցելը անհետաձգելի գործողություն չի համարել:

Նշված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ Ն.Մուրադյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, նկատի ունենալով, որ քրեական գործով քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում դրանց կատարումը հրատապ էր և ժամանակին չկատարելը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի:

8.Հետքաբան փորձագետին առաջադրվել են անհասկանալի հարցեր՝ մասնավորապես տուժող Ա.Հովհաննիսյանի հագուստների և մարմնի վրա առկա վնասվածքն իրենց տեղակայմամբ և բնույթով համընկնում են միմյանց, թե՝ ոչ, այն դեպքում, երբ փորձագետին որևէ ելակետային տվյալ չի տրամադրվել տուժողի մարմնական վնասվածքների վերաբերյալ: Քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող՝ տարբեր բնագավառների հատուկ գիտելիքներ պահանջող պարզաբանման հարցերի վերաբերյալ նպատակահարմար էր նշանակել դատահետքաբանական, դատակենսաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննություն, ինչը նույնպես չի կատարվել:

Հիշյալ առերևույթ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ դատահետքաբանական փորձաքննության ընթացքում փորձագետի կողմից պահանջվում է նաև դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը և պարտադիր չէ տուժողին ներկայացնել:

Նշված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ Ն.Մուրադյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ նշված հարցերը գտնվում են քննիչի հայեցողության շրջանակներում:

9.Քրեական գործի ուսումնասիրությամբ պարզ չէ, թե ինչպես են նյութերը ստացվել Շենգավիթի քննչական բաժնում, ում հանձնարարությամբ է քննիչը դրանք ընդունել վարույթ և հարուցել քրեական գործ:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին,որ 24.12.2014թ. հանդիսացել է քննչական բաժնի հերթապահ քննիչը և ոստիկանության Շենգավիթի բաժնից ստանալով ահազանգը մեկնել է բժշկական կենտրոն, իսկ ահազանգի կապակցությամբ նախապատրաստված նյութերը ստացել է ոստիկանության բաժնի հանցագործությունների հաշվառման մասին թիվ 1 գրքում ստորագրելով:

Նշված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ Ն.Մուրադյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը, նկատի ունենալով, որ վերոգրյալը գործավարությանն առնչվող հարց է:

10. Ս.Ավագյանի բերված այլուրեքությունը հաստատելու կամ հերքելու նպատակով չի ստուգվել նաև վերջինիս կողմից վրաց-ռուսական սահմանը հատելու հանգամանքը: Բացի այդ, Ս.Ավագյանի հարցաքննության արձանագրությունից առաջ գործում կարված է վերջինիս անձնագրի 1-ին էջի պատճենը, ինչից կարելի է ենթադրել, որ Ս.Ավագյանը ներկայացրել է իր անձնագիրը, ուստի քննիչը կարող էր անձնագրի

զննությամբ մասնակիորեն պարզել Ս.Ավագյանի բերված այլուրեքությունը, սակայն այդ ուղղությամբ որևէ գործողություն չի կատարվել:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ վերոհիշյալ գործողությունները պլանավորել է կատարել նախաքննության ընթացքում:

Նշված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ Ն.Մուրադյանի գործողություններում առկա են իրավախախտման փաստն ու վերջինիս մեղավորությունը, քանի որ քրեական գործով քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող ակնհայտ փաստական հիմքերի առկայության պայմաններում դրանց կատարումը հրատապ էր, չի կատարել դրանք, ինչը կարող էր հանգեցնել ապացույցների կորստի:

11.Հարցում չի կատարվել ՀՀ առողջապահության նախարարությանը՝ Ս.Ավագյանի ենթադրյալ հիվանդությունների առկայության, դրանց առթիվ ՀՀ բուժհաստատություններում ստացած բուժօգնության հարցերը պարզելու վերաբերյալ:

Հիշյալ իրավախախտման վերաբերյալ Ն.Մուրադյանը կարգապահական հանձնաժողովին բացատրություն տվեց այն մասին, որ վերոհիշյալ գործողությունները պլանավորել է կատարել նախաքննության ընթացքում:

Նշված դրվագով հանձնաժողովը որոշեց, որ դրվագով Ն.Մուրադյանի գործողություններում բացակայում է իրավախախտման փաստը, քանի որ նշված հարցերը գտնվում են քննիչի հայեցողության շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 9-րդ մասով, «ՀՀ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 17.11.2014թ. թիվ 12-Ա հրամանի 72-րդ կետի 2-րդ ենթակետով, 73-75-րդ կետերով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Շուրջ 45 օր տևած նախաքննության ընթացքում խիստ թերի և մակերեսորեն քննություն կատարելու դրվագով Ն. Մուրադյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

2.«Մալաթիա» ԲԿ ընդունվելու, դեպքի վայրի հարակից տարածքի սուպերմարկետի տեսագրությունները, ինչպես նաև «Մալաթիա» բժշկական կենտրոնից ստացված տուժողի հագուստները չզննելու և դրանք քննության առարկա չդարձնելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

3.Դատաբժիշկ փորձագետի պահանջը չկատարելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում բացակայում են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 1):

4.Փորձաքննության որոշումը փաստացի չծանոթացնելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

5.ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժնին տրված բազմաթիվ հանձնարարություններում հանցանք կատարած անձի ինքնությունը պարզելու և նախաքննական մարմնին ներկայացնելու վերաբերյալ որևէ նշում չկատարելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը: (կողմ՝ 6, դեմ՝ 0):

6.Փաստացի կասկածյալի կարգավիճակում գտնվող Ս.Ավագյանին վկայի կարգավիճակով հարցաքննելու և նրան ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացնելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

7.Խուզարկության և վերծանումների թույլտվություն ստանալու միջնորդություններ հարուցելու մասին որոշումներն ուշացումով կատարելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

8.Հետքաբան փորձագետին անհասկանալի հարցեր առաջադրելու,քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող՝ հարցերի պարզաբանման վերաբերյալ դատահետքաբանական, դատակենսաբանական և դատաբժշկական համալիր փորձաքննություն նշանակելու հարցը չքննարկելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

9.Քրեական գործի նյութերը պատշաճ կարգով Շենգավիթի քննչական բաժին մուտք չլինելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

10.Ս.Ավագյանի բերված այլուրեքությունը հաստատելու կամ հերքելու ուղղությամբ համապատասխան գործողություններ չկատարելու, ինչպես նաև վերջինիս անձնագիրը չզննելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում առկա են իրավախախտման փաստն ու նրա մեղավորությունը (կողմ՝ 5, դեմ՝ 1):

11.Ս.Ավագյանի ենթադրյալ հիվանդությունների առկայության, դրանց առթիվ ՀՀ ԱՆ բուժհաստատություններում ստացած բուժօգնության վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարությանը՝ հարցում չկատարելու դրվագով Ն.Մուրադյանի արարքում բացակայում է իրավախախտման փաստը (կողմ՝ 6, դեմ՝ 0):

12. Սույն որոշման օրինակն անհապաղ ուղարկել ՀՀ քննչական կոմիտեի նախագահին: